




ՄԻՈՒ

1966



ՄԱՐԿԵԼ ԾԱՌԱՅ ՅԻ ՔԻ ՈՂՈՐՄՈՒԴԵԱՄԵԼ ԱՅ ԵՒ ԿԱՄՕԲԵԼ ԱՉԳԻՍ.
ԵՂԻՍԿՈՐՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱՌՈՐԻԿՈՍ ԱՄԵԱՏԵԼ ՀԱՅՈՑ
ԾԱՅՐԱՊՈՋԵԼ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՄԱՉՈՒԱՆ ԱՄԱՆԵՇՈՒՄ ԱՊՈՈՆ ԱՅՐԱՄԱՏԵԼ
ԱՊԱՐԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՇՈՑ ՍՐԲՈՑ ԿԱՌՈՐԻԿԵ ԷԶՄԱՇՈՒՄ

ՔՐԻՍՏՈՍՄԱԿԱՆԻ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՐՑԸ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ, ՊԱՏ-
ՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ Տ. ՇՆՈՐՀՔԱՑ ԱՐԲԵՊԵՍԿՈ-
ՊՈՍԻՆ, ՀԱՄՐՈՔԻՆ ԱՐԲԵՊԵՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԳԱՊԵՏԱՑ.
ՔԱՀԱՆԱՑԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՂԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑԻ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՑ
ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Արարիչն Աստուած երբ ժամանակները լրացան, երկիր
առաջից իր Միածին Որդին, Փրկիչը մեր, որպէսզի սիրոյ եւ
խաղաղութեան իր պատգամը, նոր ուխտով մը վերստին ա-
ւետուի աշխարհին, եւ մարդիկ ապրին ու գործեն սիրով միա-
բան, իբրեւ եղբայրներ հարազատ, իբրեւ հաւասար ու ազատ
գաւակները միեւնոյն երկնային Հօր: Նոր Ուխտի վէճին վրայ,
Քրիստոս եւ իր աշակերտները հիմնեցին Ս. Եկեղեցին, «Զի
յաշտենացի անդ իշխանութեանց եւ պետութեանց, որ յեղիկն
են, ի ձեռն Եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն, իւր
տուժոյ, ըստ յառաջադրութեանցն, զոր արար ի ձեռն Արարչի
րոյ Յիսուսի Քրիստոսի» (Եփես. Գ. 10-11): Իսկ «ամախաւաղից ի

Բոլոր մարդիկ, որոնք կը դաւանին միեւնոյն Աստուծոյ որպէս Արարիչը ու նախախնամող Հայրը տիեզերքի, որոնք կը դաւանին Գրիգորիոս որպէս մարմին առած խօսքը Աստուծոյ եւ Փրկիչը ազգի մարդկան, որոնք կը դաւանին ի ձօրէ բխեալ Ս. Հոգին որպէս միութեան, անդամներն են Քրիստոսի եկեղեցիին: Բոլոր քրիստոնեաները, իրենց մկրտութեամբ, իրենց հաւատով ու փրկութեան յոյսով, միացած են Քրիստոսի խորհրդաւոր Մարմնոյն մէջ, որ Ս. Եկեղեցին է՝ մէկ, ընդհանրական, առաքելական եւ սուրբ, իբրեւ միակ Գլուխ ունենալով զինքը՝ մեր Տէրը եւ Փրկիչը Յիսուս, ի սկզբանէ, այժմ եւ յաւիտեան:

Քրիստոնէութիւնը իր ետին ունի երկու հազար տարիներու պատմութիւն մը, որու ընթացքին մարդկային պայմանին յատուկ երեւոյթներ ու պատմականօրէն սկիզբ առած ու զարգացած իրադրութիւններ, ծնունդ տուած են մեզի ծանօթ քրիստոնեայ պատմական եկեղեցիներուն, որոնց ամբողջութիւնը կը կազմէ Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցին:

Եկեղեցին, իբրեւ աստուածային նախախնամութեան գործ, անշուշտ մէկ է եւ տիեզերական, սակայն այդ աստուածային տնօրինութեան իրազործումը երկրի վրայ զգեցած է եւ կը զգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծութեան եւ Աստուծոյ խօսքը ընկալելու եւ ապրելու կերպին, եւ համաձայն պատմական իրադրութեանց եւ աւանդութիւններուն, որոնց մէջ ծնած եւ աճած են եկեղեցիները:

Այս երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնէութիւնը, եկեղեցիները յաճախ կուրծք տուած են արտաքին այլեւ կոծումներու եւ ներքին հակամարտութիւններու եւ պառակտումներու, եւ երբեմն նոյնիսկ թշնամական փոխադարձ գործադուրքիւններու, սակայն, Աստուծոյ ողորմութեամբ, անոնք կարողացած են հասնիլ խաղաղութեան ափին, շարունակելով իրենց սրբազան առաքելութիւնը, ամէն մէկը իրեն սահմանուած հօտին մէջ:

Մեր օրերուն, փառք Ամենակալին, այլեւս չկան ոչ-քրեկամական դրսեւորումներ եկեղեցիներու միջեւ: Այլեւս ոչ ոք չի մտածեր հին վէճերու եւ հակառակութիւններու մասին: Այսօր բոլոր եկեղեցիները, բոլոր քրիստոնեաները կը խօսին փոխադարձ հաճութեան մասին, միութեան մասին:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, դաւանաբանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով ու բանաձեւումներով թէ եւ կը մնայ անշեղ ու հաստատ իր աւանդական ուղղափառ դիրքերուն վրայ, սակայն ինչպէս անցեալի մէջ, այսօր ալ կ'առաջնորդուի «*Միութեան մէջ խորհուրդ եւ ազատութիւն յերկրայական»* հիմքի ու բարեբաժնի սկզբունքով: Ուրեմն, յոյժ

ցանկալի է, որ խոսքը եկեղեցիներում հետ մենք շարունակենք պահպանել ու մշակել իրաւ քրիստոնէական եղբայրական կապեր, մեր Մայր եկեղեցւոյ եւ մեր լուսաբանի հայրապետներու ոգիով, եկեղեցիներում միջեւ միութիւնը տեսնելով ի Գրիստոս սիրոյ, մէջ, փոխադարձ ճանաչման ու գնահատման մէջ, սերտ գործակցութեան մէջ:

Դաւանաբանական, քրիստոսաբանական կամ այլ խնդիրներ այլեւս արգելիչ չեն եւ ոչ ալ պայման՝ եկեղեցիներում սիրալիր յարաբերութեանց ու եղբայրական գործակցութեանց: Դաւանաբանական դիրքերու վերաբնութեան եւ միակերպումի ճանապարհով միութեան կամ փորձերը տակաւին կանխահաս են: Այսօր նման փորձեր կրնան դուր բանալ նոր վէճերում, նոր անհասկացողութիւններում եւ իրերամերձ դրսեւորումներում: Յիշենք, որ անցեալի մէջ յաճախ, միութեան մասին մարդոց տեսակէտներն են եղած քրիստոնէական ճշմարիտ սիրոյ եւ միութեան ոգին խափանողը:

Վերաբնենք եւ փոփոխել տասնեակ մը եւ ւեւի դարերու հողովոյթով հաստատուած կանոններ ու դաւանաբանական բանաձեւեր, նուիրագործուած աւանդութիւններ ու ծիսական կերպեր, վստահօրէն շփոթութիւն եւ դժգոհութիւն պիտի յառաջացնէ հաւատացեալ ժողովուրդի գիտակցութեան մէջ, եւ տկարացում սիրոյ եւ հաւատարմութեան՝ դէպի Մայր եկեղեցի, եւ հետեւաբար քրիստոնէական հաւատի տկարացում ժողովուրդի հոգեբանութեան մէջ, ի մասնաւորի ազգային եկեղեցիներում պարագային:

Մեր եկեղեցւոյ ծագման, կազմաւորման ու զարգացման պատմութեան ու աւանդութիւններում եւ մեր ժողովուրդին յատուկ՝ կրօնական ապրումներու դրսեւորման կերպերում մէջ մենք կը գտնենք մեր Ազգային եկեղեցիին քրիստոնէական հարազատութիւնը եւ վաւերականութիւնը:

Ազգի մը բազմադարեան կեանքի փորձով մարմին առած ու կեանքի ձեւ ստացած աւանդութիւնները, հոգեբանութիւնը եւ աստուածաբանական մտածելակերպը շատ աւելի գորաւոր են ու վաւերական, քան տեսական մեկնութիւնները, ինչքան ալ տրամաբանական քուրսն անոնք վերացական մտածումի առջեւ:

Հայ եկեղեցին չի կրնար անտեսել նաեւ իր գոյութեան ու իր առաքելութեան ազգային նկարագիրը: Մասնաւոր ի սփիւռս աշխարհի ցրուած հայ ժողովուրդի համար, Հայ եկեղեցին իր ինքնուրոյն դաւանաբանութեամբ, աւանդութիւններով, ազգային լեզուով ու ծէսերով, իր անկախ ու ժողովրդապետական կազմակերպութեամբ, ազգապահպանման հզօր ազդակ եւ ինքնուպաշտպանութեան ամուր վահան կը հանդիսանայ այսօր, երբ մեր ժողովուրդի աւելի քան կէսը եւ մեր նախնապետական պատ-

մական Աթոռներու չորսէն երեքը կը գտնուին Մայր Հայրենիքի ոստիաններէն դուրս:

Հետեւաբար, եկեղեցիներու միութիւնը Մենք կ'ըզմանք իրականացած տեսնել հաւատալով, թէ Քրիստոսով եւ Ս. Աւետարանով մէկ է եկեղեցին, եւ թէ պատմական ազգային եկեղեցիներու գոյութիւնը, այնպէս ինչպէս անոնք կան այսօր, չի հակասեր եւ չի ժխտեր Քրիստոսով մէկութիւնը Ընդհանրական եկեղեցին:

Մեր օրերուն, եկեղեցիներու միութեան գաղափարը եւ առաջադրանքը պէտք է բանաձեւել իբրեւ միութիւն մը Քրիստոսի սիրոյն մէջ, եղբայրական յարաբերութեանց մշակումով ու սերտ գործակցութեամբ, փոխադարձ հանդուրժողութեան, յարգանքի ու հաւատարմութեան պայմաններու մէջ, ամէն եկեղեցի պահելով իր դաւանաբանական մտածելակերպը, իր աւանդութիւնները եւ իր ինքնագլուխ անկախ ղեկավարութիւնը:

Եկեղեցիներու միութեան գաղափարը, մեր դարաշրջանին համար, օգտակար ձեւով եւ բաւարար չափով իրագործուած է եկեղեցիներու Համաշխարհային հորիւրդի շարժման հիմնական սկզբունքներով, որոնք բանաձեւուեցան 1961-ին, Գեղիքի համագումարին: Ամէնքս հոգեպէս միութեամբ ըլլալու ենք, եթէ աշխարհի բոլոր քրիստոնեայ եկեղեցիները, առանց խտրութեան, անկեղծօրէն միանան եւ հաւասար հեղինակութեամբ եղբայրաբար գործակցին, մեր օրերուն՝ քրիստոնեայ եկեղեցիները եւ հասայն մարդկութիւնը յուզող կենսական հարցերու լուծման նախապահին: Եթէ մեր սերունդը այդ իրականացնէ, արդէն պատմական մեծ յաջողութիւն մը արձանագրած պիտի ըլլայ Քրիստոսի մի եւ Ընդհանրական Ս. Եկեղեցին:

Եւ Մենք տակաւին կը հաւատանք, թէ պատմական եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող աստուածաբանական մտածելակերպի, վարդապետական մեկնաբանութեանց, պատմական աւանդութեանց եւ ծիսական ձեւերու բոլոր այն տարբերութիւնները, որոնք անցեալի մէջ հանդիսացած են պատճառներ հակամարտութեանց ու թշնամութեանց, մեր օրերու կեանքի պայմաններու տակ, մեր արդիական մտայնութեան ու հոգեբանութեան մէջ, ուրկէ չհացած են եւ պէտք է չհաճան այլեւս մոլեռանդութիւնը եւ անհանդուրժող ոգին, բոլոր այդ տարբերութիւնները ու անոնց պահպանումը պէտք է նկատուին անհասկացողութեանց եւ իրերամերժութեանց պատճառներ, այլ ընդհակառակը, գանձնք պէտք է նկատել մերձեցման եւ փոխադարձ զնահատութեան ազդակներ, որովհետեւ անոնք բոլորը, դարերու հոլովոյթով, քիւրեղացումներն են եկեղեցական ներշնչուած հայրերու եւ հաւատաւոր ժողովուրդներու վաւերական քրիստոնէական ապրումներուն եւ ստեղծարար ճիգերուն: Այդ բոլորի անփոփոխ եւ անայլայլ պահպանումով, Քրիստոսի եկեղեցին կը գառնայ առաւել ամբողջական, առաւել հարուստ եւ առաւել գե-

զահիւս, վասնզի անոնք արտայայտութիւններն են աստուածային յայտնութիւններուն եւ նշմարտութիւններուն, աշխարհի բրիստոնեայ ժողովուրդներու բազմադարեան կրօնական փառսնով առարկայացած:

Բոլոր պատմական եկեղեցիներու իմացութեան, ներշնչումի եւ ապրումի բիրեղացած, առարկայացած այդ արտայայտութիւնները կը կազմեն այն համաբրիստոնեական, տիեզերական գանձարանը, որ իր ամբողջութեամբ միայն, իր այլազանութեամբ ու բազմեղանգութեամբ, նոյնիսկ երբեմն իր հակասութիւններով, կ'արտացոլէ լիութեամբ տիեզերքը Աստուծոյ խօսքին եւ կը ճառագայթէ փառքը Բրիստոսին, մտածումի տարբեր ձեւերով, զգացումի տարբեր երանգներով, տարբեր լեզուներով, տարբեր դաշնաւորումներով:

Պատմականօրէն զարգացած ամէն Բրիստոնեական եկեղեցի իր սուրբերով, իր դաւանութեամբ, իր աւանդութիւններով, իր գրականութեամբ եւ իր արուեստով, ուրոյն եւ անկրկնելի ապրող յուշարձան մըն է, վաւերական վկայութիւն մըն է՝ *«Վասն մեծի փառացն Աստուծոյ»*:

Պէտք է սրբութեամբ պահել, պահպանել զանոնք ամբողջ, անխառն ու անայլայլ, առանց յովտ մը իսկ աւելցնելու կամ պակսեցնելու: Պէտք է ազատացնել, պէտք է տկարացնել, պէտք է գունագերծել Բրիստոսի եկեղեցին:

Ինչքան իրաւ աւետարանական հոգի կայ, ինչքան մարդկային նշմարտութիւն եւ ինչքան ողջմտութիւն՝ մեր երանաշնորհ երիւնեան Հայրիկի բոլորիս ծանօթ այն պարզ ու վնիստ պատկերին մէջ, որով բրիստոնեական եկեղեցիները կը նմանցնէր մեծ ծաղկեփունջի մը, ուր ամէն մէկ ծաղիկ իր ուրոյն գոյնը ունի, իր ուրոյն երանգը եւ իր ուրոյն բոյրը, բոլորը մէկտեղուած Բրիստոսի սիրոյ կապով:

Այսօր, եթէ կայ բան մը, որ մենք՝ բրիստոնեաներս եւ աշխարհի եկեղեցիները պէտք է իրօք փնտռենք՝ այդ Բրիստոսի սէրն է:

Ազօթեմք, որ Տէրը իր սիրոյ տիեզերքէն յոյս իջեցնէ մեր հոգիներէն ներս, ու շողացնէ զայն մեր կեանքին ու մեր մեռաց գործերուն մէջ, որպէսզի բոլորս, աշխարհի բոլոր բրիստոնեաներս, ստրկինք ընթանալ նշմարիտ սիրոյ, խաղաղութեան եւ եղբայրական գործակցութեան ճանապարհէն. «*Ձի սէր յԱստուծոյ է*» եւ «*Աստուած սէր է*» (Ա. Յովհ. Դ. 7, 9):

Այս սիրոյ շունչով, Յիսուս եւ իր առաքեալները եկեղեցին հիմնեցին: Այս սիրոյ շունչով միայն բրիստոնեաները, եկեղեցիները բոլոր կը միանան Բրիստոսի մէկ եւ Հնդհանրական եկեղեցիին մէջ:

Այս սիրոյ շունչով, եկեղեցիներ ու հաւատացեալներ այսուհետեւ ոչ են «օտարք եւ պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ, շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս» (Եփես. Բ. 19-20) :

Այն Մեր հայրապետական կոնդակով, կը խորհիմք կառոցացանք արտայայտիչը ըլլալ եւ յստակել Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ հայ հաւատացեալ ժողովուրդի զգացումը, եկեղեցիներու ցանկալի միութեան գաղափարին վերաբերեալ, որով եւ կը յորդորենք եւ կը հրաւիրենք զձեզ, սիրելի՛ք Մեր, բանիւ եւ գործով ընթանալ մեր լուսաբնակ մախնեաց մեզի աւանդ թողած համապարհէն, անշեղ ու անսասան պահելով մեր Առաքելական ու Ազգային Ս. Եկեղեցին, եւ անկեղծօրէն, խնդութեամբ գործել, իրականացած տեսնելու համար բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու միութիւնն ու եղբայրութիւնը Քրիստոսի կեանքար սիրով :

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յես զնացից նոցա՝ նմանողք եղերուք հաւատոցն» (Եբբ. ԺԳ. 7) :

Սէ՛ր եւ խաղաղութի՛ւն եւ միութի՛ւն եկեղեցեաց քրիստոնէից :

Սէ՛ր եւ խաղաղութի՛ւն եւ միութի՛ւն Հայաստանեայց եկեղեցւոյս, այժմ եւ յաւիտեան :

Ողորմութիւն Աստուծոյ եւ շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ :

Ամէն :

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4-ձ յունիսի

1965 Փրկչական ամի,

եւ ի տունարիս Հայոց ՌեճԳ,

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ՄԻՈՆ

Խ. ՏԱՐԻ-ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

سيون مجلة ارمينية تهريه، دينية، ادبية، ثقافية
"SION" ARMENIAN MONTHLY OF RELIGION, LITERATURE, PHILOLOGY.

1966

Յուլիս

Թիւ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ "ՀԱՄԱՇԽՍԱՐՀԱՅՆՈՒԹԻՒՆԸ"

Իր երկար պատմութեան իւրաքանչիւր շրջանին, Քրիստոսի Եկեղեցւոյ կեանքը յուզող մեծ շարժումները առանցք ունեցած են բառ մը: Առ հասարակ այդ բառը պատկանած է աստուածաբանական բառարանին. Երրորդութիւն, Աստուածածին, եւ յՈՐԴԱՆՅ, Կնոզիս, մի՛ բնութիւն, indulgence, reform. եւ այս բառերը եղած են երբեմն պայքարի զէնք, բաժանումի առիթ, յաղթանակի դրօշակ, բայց միշտ ալ՝ թթխմորը, որ մտածումներու եւ գաղափարներու քրիստոնէական աշխարհը խմորած են, չաղախելով հաւատքի ալիւրը ժամանակի ջուրին:

Առաջին անգամն է սակայն, որ մեր օրերուն, իշխող բառը աստուածաբանական չէ՛: Քառասուն տարիներէ ի վեր, Քրիստոսի Եկեղեցին եթէ նկատենք իբրեւ ամբողջ՝ պիտի ընդունինք որ ան կ'ապրի մագնիսականութեանը տակ նոր ստեղծուած բառի մը, որուն հայերէնը տակաւին չէ՛ ալ նուիրականացած — համաշխարհայնութիւն (Oecumenism):

Եկեղեցիները իրարու մօտեցնող եւ, հանդիպումներէ եւ խօսակցութիւններէ ետք, զանոնք Ազգերու կազմակերպութեան օրինակով իրարու շղթայող մեծ շարժումն է oecumenism-ը: Քրիստոնէական գիտակցութեան այնքան խորերէն բարձրացած շարժում, որուն զնացքին չկրցաւ տողալ նոյնիսկ ինքզինք միա՛կ տիեզերական եւ միա՛կ համաշխարհային դաւանող Հռոմի Եկեղեցին:

Եթէ մի քանի տարիներ առաջ նախատեսութիւն մը յայտնուած ըլլար, թէ Քրիստոնէական Եկեղեցիներու ամբողջ շարքը, ծայրայեղ շարժապահներէն մինչեւ ուղղափառ պահպանողականները եւ Յռյներէն մինչեւ Հռոմայեցիները, կրնան նստիլ նո՛յն սեղանին շուրջ եւ խօսակցիլ՝ երազատեսական մարդ-սրէութիւն մը պիտի նկատուէր եւ քմծիծաղ միայն առթէր, այնքան թանձր էր դարերու պարիսպը մեր տարակարծութիւններուն միջեւ:

Եւ ահա որ մի քանի տասնեակ տարիներ բաւ եղան յիշադրելու համար իրականութիւնը:

Սկսուած Բողոքական Եկեղեցիներու համեստ շրջանակի մը մէջ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը աճեցաւ եւ արմատացաւ, մինչեւ եղաւ կազմակերպութիւն եւ, հետզհետէ հաւեցնելով ամէն արտաքին նկատում, իր մէջ առաւ բոլոր Քրիստոնէական Եկեղեցիները, բացի Հռոմէն եւ դարձաւ Ոգի: Համաշխարհայնութիւնը, Եկեղեցիներու կեանքին մէջ, այլեւս փոխադարձ յարգանքի եւ զիրար լսելու տրամադրութիւններէն աւելի՛ շնչող եւ ներշնչող «Հողմն» է, որ Եկեղեցիները կը բերէ ոչ թէ դէմ-դիմաց, այլ քով-քովի, միասին հրելով զանոնք դէպի մեծ նպատակը՝ որ միութիւնն է:

Համաշխարհայնութեան արմատայնութիւնները եւ Եկեղեցիներու միջեւ կազմակերպուած հանդիպումները, ամէն մակարդակի վրայ եւ տարբեր նշանաբաններով, այլեւս անհամար բոլորելու չափ բազմացած են: Իւրաքանչիւր քաղաքի, երկրի եւ աշխարհամասի մէջ, հոգեւոր հովիւներու մակարդակէն մինչեւ Եկեղեցւոյ պետերու մակարդակը, հանդիպումներ տեղի կ'ունենան, տարբեր դաւանանքի հետեւող քրիստոնեաները միատեղելու համար եւ աղօթքի, դասախօսութեան, տեսակէտներու բազմաթիւութեան եւ միութեան մը քաղցր հեռապատկերով խանդավառելու համար:

Միութեան տեսակէտէն, համաշխարհայնութեան համար տարած այս շարժումին դրական արդիւնքներէն ամենէն անմիջականը եղաւ Եկեղեցիներու մեծ խմբաւորումներու յառաջացումը:

Աւետարանական բազմաբեկոր եկեղեցիները հասարակաց երեք գլխաւոր յայտարարներու տակ հաւաքուեցան. ծայրայեղ, միջին եւ պահպանողական, եւ ձեռնարկեցին արդէն իսկ միա՛սուելու միջոցներ, որով տարբերակներով միայն իրարմէ

բաժնուած եկեղեցիները պիտի կազմեն վերահաւաքուած եկեղեցիներ: Աւետարանի մեկնութեան բացարձակ ազատութիւն, մերժում քահանայական աստիճանի, նուիրապետութեան եւ դաւանական կանոնի՝ սկզբունքներն են որոնց շուրջ կը փորձեն հաւաքուիլ յատկապէս ամերիկեան Բողոքականներ, զորս ծայրայեղ կոչեցինք: Բողոքականութեան մեծ եկեղեցիները՝ Մկրտչական, Համայնքական (Congregational), Շարաթապահ, եւայլն, միջին այն խումբը կը կազմեն, որուն ճիգերը ամենէն յանդուգնը կը թուին ըլլալ փոխադարձ զիջումներու եւ ամբողջական միութեան ճամբուն վրայ: Իսկ Անկլիքան, Եպիսկոպոսական, Լուտերական եւ առ հասարակ նուիրապետութիւն, խորհուրդ եւ դաւանանք պահող հին եկեղեցիները, որոնք պահած են Քրիստոնէական եկեղեցւոյ հին ժառանգութիւնը եւ Բողոքական են միայն Հռոմի եկեղեցիէն իրենց անջատումով, կը կազմեն պահպանողական այն պատկառելի խումբը, որուն ազդեցութիւնը եւ դեկամվարող դիրքը ամենէն աւելի կը գզացուին այս շարժումին ետին:

Այսօր oecumenism-ը ունի ոչ միայն տարօրինակ նուաճողականութեամբ զարգացած պատմութիւն մը, այլ նաեւ իր այդ պատմութենէն անջատուող մեծ պահեր:

Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի պատմութիւնը պաշտօնական պատմութիւն է միայն oecumenism-ին. խորհրդակցութեան համար հաւաքուած Բողոքական եկեղեցիներու գրասենեակէ մը ան հասաւ Ազգերու Կազմակերպութեան նման միջազգային մարմինի մը, որուն անդամակցութեան եկան, իրարու ետեւէն, ոչ-կաթոլիկ բոլոր եկեղեցիները: Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի իւրաքանչիւր նիստ այսօր միջազգային դէպք մըն է, որովհետեւ արտայայտութիւնն է ոչ միայն տարտամ փափաքի մը, միանալու կամ գործակցելու մշտնջատ տրամադրութեան մը կամ միջոցը՝ եկեղեցիներու ներկայացուցիչներու տարբեր տեսակէտներու արտայայտութեան առիթի ընծայման, այլ հաւատքի արարք մըն է, որով բոլոր Քրիստոնեայ եկեղեցիները միասնաբար կը նային այսօրուան աշխարհին եւ անոր առաջադրած մեծ հարցերուն կը բերեն քրիստոնէական խիղճին պատասխանը:

Սակայն Համաշխարհայնութեան պատմութեան մեծ պահերը արձանագրուեցան պաշտօնական նիստերէն դուրս: Գանթէրպըրիի Արքեպիսկոպոսներու այցելութիւնները Հռոմ, Երուսաղէմի պատմական հանդիպումը, Հռոդոսի հաւաքոյթները, բայց մանաւանդ Վատիկանի Բ. Ժողովը շարքն է յաջորդականութեամբ՝ որոնք oecumenism-ով յաւիտենապէս դրոշմեցին մեր օրերու եկեղեցին:

Աթոռներու հակամարտութիւններ, հերետիկոսութիւն եւ հերձուած նեխած բառեր են այլեւս, դատապարտուած մոռացութեան՝ եկեղեցւոյ յիշողութեան մէկ անկիւնին մէջ: Ինչ հարիւր տարիներ առաջ զիրար նշոված Հին եւ Նոր Հռոմի զահակալներու:

Երուսաղէմի հանդիպումը եւ ապա՝ Հռոմի եւ Կոստանդնուպոլսոյ մէջ կարդացուած որոշումները՝ որոնցմով կը սրբուէին հին անէծքներու հետքերը, Հռոմոս կղզիին մէջ կայացած Օրթոտոքս Եկեղեցիներու Համաժողովի որոշումները եւ մանաւանդ Վատիկանի վերջին ժողովին հիմնապէս բարեփոխուած եւ պարզօրէն հասկացող ու բարեկամական դիրքը այլ Եկեղեցիներու հանդէպ, իրար մերձեցման արարքները ըլլալէ շատ աւելի՝ արտայայտուած թիւնն են ներքին անհրաժեշտութեան մը, որ հետզհետէ աւելի խորութեամբ կը զգացուի քրիստոնէական գիտակցութեան մէջ:

Այդ է բացարձակ անհրաժեշտութիւնը պրկելու Եկեղեցիին ներքին ոյժերը՝ հաւատքի արմատներուն իսկ սպառնացող մեր դարերու գաղափարական ալեկոծումներուն դիմաց: Եկեղեցին կը գիտակցի այսօր թէ հաւատքը չի՝ կրնար անաստուածութեան բացած բազմաթիւ ճակատներուն հակադրել՝ ժամանակավրէպ պատճառներով բլկտուած եւ կոտորակուած Եկեղեցի մը, որուն ոյժերը եւ ուշադրութիւնը կլանուած ըլլան մանրամասնութիւններով՝ երբ ամբողջ հաւատքն է յարձակման ենթարկուած:

Ժամանակի լեզուն, մտայնութիւնը, հրթիռային արագութեամբ իրարու ետեւէն պայթող գաղափարները, մարդէ մարդ յարաբերութիւնները սերտացնող փոխադրական մեծ միջոցները, իրարու դէմ յանդիման դալու բազմաթիւ առիթները, տեղեկութիւնները եւ լուրերը հաղորդելու եւ տարածելու մեծ միջոցները՝ դարու նկարագիրը կերտեցին, նկարագիր մը՝ որ սկեպտիկութեամբ կը նայի բացատրութեան հին ձեւերուն, որով Եկեղեցին կը շարունակէ խօսիլ մարդուն հետ: Նկարագրիի ներքին փոփոխութեան, դարու լեզուն խօսելու եւ օրուան հետ քալելու անհրաժեշտութեան արտայայտութիւնն է oecumenism-ը, իբրեւ ճիշդ կատարուած անհատ եկեղեցիներէն վեր՝ Եկեղեցիին կողմէ, իրրեւ ամբողջութիւն:

Եւ համաշխարհայնութեան այս մեծ շարժումին մէջ, տարօրինակն այն է որ իրարու մօտենալու եւ զիրար հասկնալու իրենց ճիւղին մէջ, Եկեղեցիները փոխանակ հեռանալու իրենք իրենցմէ, ընդհակառակը, կարծէք վերադարձ մը կատարած են դէպի իրենց ներքին ճշմարտութիւնը: Շարժում, ոգի, նոր շունչ եւ պատմական արարք ըլլալէ ետք, կը թուի թէ oecumenism-ը եւ չաւ նաեւ ինքնագիտակցութեան դաշտ մը, ուր իւրաքանչիւր Եկեղեցի ինք իր ճշմարտութիւնը աւելի պայծառօրէն կը զգայ եւ, ներհայեցողութեան ճիգով մը կը ջանայ դառնել թէ Եկեղեցիներու մեծ համերգին ո՞րն է իր բերելիք իւրայատուկ ձայնանիւր:

Հայաստանեայց Եկեղեցւոյ տեսակէտով, մենք ալ անցանք համաշխարհայնութեան նոյն փորձառութիւններէն, սիրեցինք մերձեցման գաղափարը, զղացինք նոյն շունչը, անդամագրուեցանք Եկեղեցիներու Համաշխարհային Որհնաւորին, դիտեցինք Վատիկանի ժողովը, խանդավառուեցանք վերադառնալու սիրոյ եւ փոխադարձ յարգանքի զգացումներով՝ միւս Եկեղեցիներուն

հանդէպ, եւ հասանք ահա ինքնաճանաչման մեծ հանգրուանին: Հոս՝ լուսաւոր ներկայութեամբ մը, 4 Յունիս 1965 թուակիր Ն. Ս. Օծութեան սրբատառ կոնդակը եկաւ հայեկիացնելու մեր այբին՝ մեր Եկեղեցւոյ դարաւոր ոգին եւ տոկոն սկզբունքները, համաշխարհայնութեան լոյսին տակ:

Մեր Եկեղեցւոյ աւանդական լայնամտութիւնը, հանդուրժողութեան ոգին իբրեւ զգացում, եկեղեցարանութիւնը իբրեւ դաւանանք, եւ ժողովրդապետութիւնը իբրեւ վարչաձեւ՝ մեր Եկեղեցին դրած են արւէն oecumenism-ի շրջագիծին մէջ, բառին ստեղծումէն ալ առաջ: Մենք զմեզ բնաւ դաւանած չենք իբրեւ միա՛կ Եկեղեցի, այլ Հայո՛ց Եկեղեցի, ի շարս Քրիստոսով գլխաւորուած այլ Եկեղեցիներուն, սրբագործուած նահատակ մեր ժողովուրդի արիւնով եւ ճոխացած մեր հայրերու ստեղծագործ հանճարին ժառանգութեամբ: Ազգային իր նկարագրով՝ մայր ու պաշտպան, սնուցիչ, դաստիարակիչ եւ միացուցիչ՝ պատմութեան հարուածներուն առջեւ ցրուած մեր ժողովուրդի բեկորներուն, Հայոց Եկեղեցին հրաշալիօրէն կատարած է ազգային իր առաքելութիւնը, առանց գիջելու բնաւ կրօնական իր կոչումէն:

Փոփոխութիւնը, այսօր, մեր ուրախութիւնն է որ բազմաշաբար մեր Եկեղեցին չի՛ հալածուիր այլեւս իբրեւ հերձուածող եւ հերետիկոս, այլ իր լայն ոգիին պատասխանը կը ստանայ միւս Եկեղեցիներէն, նո՛յն ոգիով եւ սիրով:

Կը հաւատանք որ Ս. Հոգւոյ ներգործումն է որ կը քաղցրացնէ վերաբերմունքները մեր նկատմամբ եւ կարելի կ'ընէ որ մենք եւս մեր դարերու հայկական ժառանգութիւնը ամուր բռնած մեր ձեռքերուն մէջ՝ յառաջանանք Եկեղեցիներու այս մեծ չքերթին մէջ, համաշխարհայնութեան դրօշին տակ դէպի միութեան մեծ երազը:

Շ.

լով՝ փոյթ չեն բրած աղատօրէն ընդունիլ եւ ընթերցուլ Հայաստանեայց Եկեղեցիէն ներս: Մինչեւ այսօր Հայոց Եկեղեցւոյ Գրքերու գումարութենէն դուրս մնացած է եւ Հրապարակաւ չի կարդացուիր:

Լամբրոնացիին կը վկայէ իր Յիշատակարանին մէջ թէ՝ «Այս Յայտնութիւն աստուածաբան, Աւետարանչին Յովհաննու» արտոյ Հարցն մերոց՝ վարդապետութեամբ պատուեալ ի պէտս վկայութեանց, զերծաւ ի գալթակութենէ կարծեաց ոմանց, որք այլոնդայս իմացաւ, զսմանէն: Եւ կ'աւելցնէ թէ՝ Մեծն Գրիգորիոս (Արիսապագացի) աստուածաբանական ճառին մէջ Հիւսեց տար վկայութիւնք, նաեւ Իրենէնոս Մեզապոլս Եպիսկոպոսը, Գրիգոր Աստուածաբանը՝ իր Հրաժարական ճառին մէջ, Գրիգոր Նիւսացիին՝ Եպիսկոպոսաց Ժողովին մէջ, Մեծն Գիրեղ, Մեթոդիոս, Հիպոդիտոս եւ Որոգրիէն: Ըստ վերոյիշեալներուն՝ Եկեղեցին պատուելով հաւաքութիւն տուած եւ դասած է զայն Աստուածաշունչի Նոր Կտակարանի Մուրր Գրքերու կարգին: Լամբրոնացիին՝ Յայտնութեան մասին կ'աւելցնէ. «Որոք եղեալ եւ մեք ընթացակից՝ ի սուրբ եկեղեցւոյ մանկունս ասանդեցաք զսոյս ի դատարարական Առաքելական, Մատենիցս, որպէս արդարեւ զԱռաքելական Յայտնութիւն: Եւ ասուրբարեւ արարաւ՝ վերստին [Դերիբեայ] ի Հելենացեց իմով նուաաս ներսին թարգմանութեամբ, ընդ որ ամի եւ զընտնութեամբ Մեկնութիւն սորին եկեղեցին Հայոց»:

Այս ալ նկատի ունենանք որ մեր Ոսկեդարեան սուրբ Թարգմանիչները չեն կրնար Յայտնութեան սքանչելի Գիրքը Թարգմանեալ չլլալ, քանի որ վերջին անգամ յունական ը'տրելագոյն քննադէնէն էր Թարգմանութիւնը: Մանաւանդ որ Դ. դարուն Աղեքսանդրեան զարդոյր Մեծն Աթանաս զխաւորութեամբ յաղթանակած եւ ընդունած էր Յովհաննու Յայտնութիւնը, որուն Հետեւած է նաեւ Հայաստանեայց Եկեղեցին: Մեծն Աթանասէն առաջ ընդունած եւ Մեկնութիւնը գրած էր Որոգրիէն Հայրապետ, բայց ո՛չ պաշտօնապէս եւ ընդհանուր կերպով:

Նորայր Ն. Յիւզումիացի իր գրած «Քրիստոսութեան Թարգմանութեան Յովհաննու Առաքելոյ Յայտնութեան Գրքին» գրքին մէջ (Տիգրիս, 1900, էջ 413-422) կը

յայտնէ թէ՝ Յայտնութիւնը վաղ ժամանակէն Թարգմանուած էր Աստուածաշունչի մասցեալ Ս. Գրքերու՝ Հետ: Նորայր կ'ըսէ. «Ինչ թուի թէ այն նախնիք՝ որ փոյթ ունեցած են Թարգմանել զանգլիսեր կամ զերկրաշակա՝ մասնաւոր անգամ Մուրր Գրոց, — որպիսի են՝ Նորայր Մակաբայեցի եւ Նորայր Կորնքացի», չկարէին անտես առնել զՅայտնութիւնն, քանզի եթէ ոչ այլուստ, զո՛ւն Եկեղեցական Պատմութենէն, Եւսեբիոսի որում կանոնի ծանոթացան, լաւ գիտէին զկանոնականութիւնը դրոցս եւ զյարգոյն: Եւ այս բանի ճատարանութեան համար՝ Նորայր կը նշանակէ Հետեւեալ մասերը՝ Եւսեբիոս Եկեղեց. Պատմ., Գլ. ԺԸ 182, Գլ. ԺԸ 290, Եւ Ը 359, Զ. ԻԵ 473, Է. ԻԿ 572-580:

Եւ կամ ինչպէս Ֆրէտէրիք Մուրատ կ'ըսէ «Յայտնութեան Յովհաննու» իր ներածութեան մէջ (էջ 21Ը, Գլ. 2.)՝ «Ներսէս Լամբրոնացի, Թուի թէ մեծաւ եռանդամբ, պարագլխի յընթերցումն եւ ի զննութիւն Յայտնութեան Յովհաննու — Ապա ուրեմն, առանց իրելք յերկաւնայոյ, ընթերցումուն էր Հայերէն իմի Թարգմանութիւն Գրոցս, եւ ո՛չ եթէ օտար լեզուան ըրնագիր: ... Մանաւանդ զի բազում ինչ խանգստեալ եւ աղաւաղեալ բնագրական Հանդամանք Հնագոյն Հայերէն Թարգմանութեան առաւել եւ դժուարին առնէիք զիմացութիւն Գորին»:

Լամբրոնացի իր փնտաւորումներուն մէջ, չէր կրցած գտնել մեր բարբառով Յայտնութեան Գիրքին Մեկնութիւնը: Թերեւս թշնամիներ սորոք յաճախ անպակաս էին Հայաստան աշխարհէն, եւ որո՛ւք մասաթի եւ աւերի կը մատնէին ամէն ինչ, եւ մանաւանդ Հրդեհեալ կ'այրէին՝ Հոյր ճարակ դարձեալով ինչ որ ձեռքերնին հանդիպէր, չեն ձգած այսպիսի բան մը, զոր կը պատմեն մեր ակա՛ստես եւ սրտամաշ պատմիչները: Ինչպէս Լամբրոնացին իր իսկ օրով (1189-1191) կը պատմէ թէ՛ երբ Մեծն Լեւոն (1187-1198 իշխան, ապա 1198-1219 Թագաւոր) Հռոմկլայ կը գրէէ զինք Հայոց Կաթողիկոսին ժառ, Պետրեկասէի օրը, Մարաշի միւս կողմը՝ Վարձակեցան ի վերայ մեր Թուրքեմարը, եւ որով ճարակեցին զորս ընդ մեզ կրօնաւորը եւ աշխարհականը ողբէ իրբն ճառք, եւ յափշտակեցին ընդ այլ ինչպէս եւ

թիւն յառաջ եկած է (որոշեցմէ մին է եղած Յովհաննոս Յայտնութիւնը), Եւսեբիոս կ'ըսէ. «Բազմաց սակայն զոլով ծանօթ» է Յաւորույն եւ Յուդային (Տեառնեղբայրն իւրն), եւ Թուղթն Երկրորդ Պետրոսի, եւ Երկրորդ եւ Երրորդ Յովհաննոս կոչեցեալ Թուղթն, կամ Աւետարանչի կամ այլոց ուրուք անուանակցի նորին»։ Կ'ըսէ. «Իսկ անհարազատներուն հետ կարգելի են, Գիրք Գործոցն Պօղոսի, որ Հռովմէ կը կոչուի, եւ «Յայտնութիւնն Պետրոսի» եւ «Թուղթն Բարնաբասի», որ «Վարդապետութիւնն Առաքելոց» կ'ըսուի։ «Յայտնութիւնն Յովհաննոս» որ ոմանք կը մերժեն, եւ կէսը՝ ճշմարտն հետ զոր Եկեղեցին կ'ընդունի, կը Հաւատարմէն։ Ոմանք ասոնց հետ կը դրենք «Աւետարանն ըստ Եբրայեցւոց», որով կը պարճենա՞նք Գրիստոսը ընդունող Եբրայեցիները։ Ահա ասոնք են որոնց մասին երկմարտութիւն կայ»։

Իսկ կարեւոր դատած է յայտնել աչի որբերը նաեւ, որոնք (իր ժամանակի) Հերձուածող աղանդներէնքու կողմէ պատառաւած են Առաքելներու անունով, որոնք թոյլորովին հեռու են առաքելներու խօսելակերպէն։ Անոնք Հետեւեալներն են. Պետրոսի, Թովմայի, Մատաթեայ եւ ուրիշ Աւետարաններ (Գաղատ. Ա. 8-10՝ նաեւ 11-12), Անդրէի, Յովհաննոս եւ ուրիշ առաքելներու գործեր։ Ասոնց կամքն ա խորհուրդը շատ օտար է ճշմարիտ հաւատքին, որովհետեւ Հերձուածող մարդոց մըտքին հնարքն ըլլալով՝ յայտնապէս կը յանդիմանան։ Ասոր համար ո'չ միայն անհարազատներու հետ կարգելի են ասո'ք (կ'ըսէ Եւսեբիոս), այլ եւ իբրեւ այլանդակ եւ ամբարիշտ՝ մերժելիք են եւ խտուրիք։

Արեւմուտքի մէջ Յայտնութեան Գրքի առաջին մէկնիւնը կը ճանչցուի Վիտորիոս որ 303-ին հակառակ մահուամբ միանձնեացաւ Դիոկղեանիանոսի կողմէ։ Ապա Նաւաւոր են՝ Տիկոնիոս (390), եւ մանաւանդ Պրիմասիոս (396) եւ ուրիշներ։ Իսկ Լատինական Կա'նոն Ս. Գրոց Նոր Կտակարանի Միւնձնողական միկնոսի Հռովմի մէջ ընդունուեցաւ 382-ին Դամասիոս Հայրապետութեան օրով, Ժողովին ներկայ եղած Լը Յերոնիմոս (420) բազմամուտ գիտնական, խորհրդակիցը Դամասիոսի, որուն թե-

յադրութեամբ եւ ազդեցութեամբ սահմանաւ հաստատուեցաւ Աստուածաշունչ Սուրբ Գրքերու Կա'նոնը։ Հռովմի Ժողովին Կա'նոն ընդունեցին՝ Ափրիկեցւոց Եկեղեցիները՝ Հիպպոնայ Ժողովին մէջ 390-ին, փոքր տարբերութեամբ. այսինքն՝ Եբրայեցւոց Թուղթի յաւելումով, որը Արեւմուտքի մէջ որպէս վիճելի, ներմուծուած չէր Կանոնի մէջ։ Յետոյ՝ Կարեղոնի Երկու Ժողովներ 397-ին եւ 419-ին Սուրբ Օգոստինոսի թելադրութեամբ ընդունեցին Հիպպոնայ Ժողովին Կանոնը, միաբան՝ իննոսկինսուս Ա. Պապին (405)։ Անկէ վերջ Արեւմտեան Եկեղեցւոյ Ուղղափառ եպիսկոպոսներն ու աստուածաբան վարդապետներ առանց կասկածի եւ վիճաբանութեան ընդունեցին՝ Ս. Գրոց Նոր Կտակարանի սահմանուած օրինակը Կանոնով, եւ Յայտնութեան մատերականութիւնն ու կանոնակաութիւնը Արեւմուտքի մէջ մնաց միշտ աներկապիչ եւ հաստատուն։

Երկրորդ դարէն սկսեալ Յայտնութեան ընդունելութիւնը հաստատուելու համար, Գործող վկայութիւններ եւ փաստեր տրուած են Եկեղեցւոյ երեւելի Հայրերուն կողմէ, որոնցմէ են՝ Յուստինոս Վկայ (165) որ առաջին անգամ վկայութիւնը կու տայ Յայտնութեան մատերականութեան մասին (Եւսեբ., Պատմ. Եկեղ., Կ. Ժառնան, Դ. 18, էջ 290), Մելիտոնի Եպիսկոպոս Սաղաղացւոց Եկեղեցւոյ (170) (Եւսեբ., Դ. 23, էջ 303), Ապոլոնիոս (197) Եկեղեցւոյ մատենագիր Եպիսկոպոս Մոնտանիսիոյ (Եւսեբ., Կ. 18, էջ 358), Թէոփիլոս Եպիսկոպոս Անտիօքայ (390) ընդդէմ Հերմոգիէայ Հերձուածողի (Եւսեբ., Դ. 24, էջ 301), Իրենէոս Եպիսկոպոս Լուզոնի (420), Կղեմէս Աղեքսանդրացի (420), Տերապոլիտան Երէջ Կարեղոնի (420), Կիպրիանոս Եպիսկոպոս Կարեղոնի (425), Որդենէս (425) Յունաց Եկեղեցւոյ երեւելադոն մատենագիրը։

Երկրորդ դարուն Գոստիկեան աղանդի պետ Մարկիոն (170) անդունելով կը մերժէր Յայտնութեան Գիրքը։ Փոքր Ասիոյ մէջ՝ Հակամոնտանեան Հերձուածողը (160-170) որ յետոյ Աբրահեմ կոչուած են, Յովհաննոս միւս Թուղթերուն հետ բացէ թրաց մերժելով եւ քամահրելով Յայտնու-

թիւը, համարած են դաշն Կերէնթեայ Հերտիկոսապետի, որ Յովհաննէս Առաքեալի ժամանակից է եղած: Ասոնց միաբանած էր Գայիոս՝ Հռոմի երեւելի մատենագիրներէն մին (210), որ ժխտելով Յայտնութեան առաքելական ծագումը, առաջարկեալ էր համարէր, Կերէնթեայ աղանդապետէ՝ խորհարարուած (Եւեբ., Գ. 28, էջ 204-205):

Անքանք կոչուածներու եւ Գայիոսին դէմ՝ եռա՛դով պաշարող եւ Յայտնութեան Գրքին ջատագով եղած է Հիպոլիտոս (1220)՝ Հռոմէացիք երէցը (ապա եպիսկոպոս). իսկ Դիոնէսիոս Աղեքսանդրացին՝ Որոգինեայ աշակերտը (247-ին եպիսկոպոս Աղեքսանդրացոց եկեղեցւոյն), դարձեալ Գայիոսի՝ մաս կը խծո՛րէր Յայտնութիւնը: Իր Վիան Աւետեաց գրքին մէջ՝ Եգիպտոսի Արսինոյէ քաղաքի Նեպտոնայ Նպիսկոպոսի չազարանեայ վարդապետութեան դէմ դրած էր (Եւեբ., Ի. 24-25): Զանցած է ան, ներքին եւ արտաքին պատճառներով ցոյց տալ թէ այս դիրքը Յովհաննէս Առաքեալի՝ դործը չէ, այլ թերեւ ուրիշ անուանակցմբ. եւ ասով կ'ուզէ ժխտել Յայտնութեան Գրքին վաւերականութիւնը (Եւեբ., Ի. 25 էջ 572): Դիոնէսիոս Աղեքսանդրացիի պարտաւական քննութիւնը մեծ ազդեցութիւն ձգած է նաեւ Պաղեստինի մէջ՝ Որոգինեայ աշակերտներուն վրայ, որոնցմէ մին է կ'ըսուի Եկեղեցւոյ մեծանուն պատմագիր Եւեբիոս Կեսարացիին:

Գ. դարու վերջաւորութեան Ասորական եկեղեցւոյ պաշտօնական Աստուածաշունչ Մատենը, որ Պէշիտթա կոչուած թարգմանութիւնն է, ընդունած է Կաթողիկ: Թուղթերէն միայն Յակոբու, Ա. Պետրոսի եւ Ա. Յովհաննու: Իսկ Բ. Պետրոսի, Յուդայի, Բ. եւ Գ. Յովհաննու, ինչպէս եւ Յայտնութիւնը մերժուելով՝ կանոնէ դուրս մնացած են: Ուստի այն ժամանակէն ի վեր՝ Ս. Գրոց Ասորական Կանոնը Նոր Կտակարանի մէջ կը բովանդակէ 22 Սուրբ Գրքեր, փոխանակ քանակցի:

Արեւելքի մէջ համարաւոր տարածուած է Յայտնութեան Գրքին ընդունելութիւնը: Ս. Գրոց Կանոնին մէջ՝ Հայոց եկեղեցիք նմանող կամ հետեւող եղած է նախ Ասորւոց եւ ապա Յունաց եկեղեցիներուն, որովհետեւ ասորական ազդեցութիւնը աւելի առաջ եւ զօրաւոր էր քան յունականը, իր ախարհագրական դիրքին, մերձաւորութեան, եկեղեցական հաղորդակցութեանց եւ յարաբերութեանց պատճառաւ: Ասիկա կ'իմանա՞ր Ոսկեդարեան շրջանէն առաջ իսկ եւ նոյն շրջանին (Պատմ. Ազաթանգեղայ, տպ. Վենետիկ 1862, էջ 625-626, 637-643. Պատմ. Փ. Բիւզանդացւոյ, Բ. տպ. ի Վենետիկ, 1889, Գ. 4, էջ 78. Կորիւն, Պատմ. Վարուց եւ Մահուաց Սրբոյն Մեսրոպայ Վարդապետի, տպ. ի Վենետիկ, 1894, էջ 13-18. Ղ. Փարպեցւոյ Պատմ. Հայոց եւ Թուրքի Սու Վահան Մամիկոնեան, գ. տպ. ի Վենետիկ, 1891, էջ 39):

Չազար Փարպեցի կ'ըսէ. «Բանդի հոգացեալ յարժամ տրտէ՛ր երանելի այն Մայթոց՝ տեսնելով զմեծաշնչ ծախս մանկա՛ն Հայաստան աշխարհիւ. որք բազում թույլօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դժգոհմամբ մաշէին զուրուս իւրեանց ի դպրոցս Ասորի գիտութեան: Բանդի պաշտօն եկեղեցւոյ եւ կարգացմունք գրոց Ասորի ուսմամբ վարէին ի մանօրայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչինչ էին կարող լսել եւ օգտել ժողովուրդքս այսպիսի մեծ աշխարհի, յանլրութենէ լեզուի: Ասորքս» (էջ 39-40):

Ե. դարուն՝ Ոսկեդարեան մատենագիրներ ծանօթ էին Յովհաննու Յայտնութեան, բայց ստորգ չենք գիտեր թէ անոնց ծանօթութիւնը հայերէն թարգմա՛նութենէ՞ն էր թէ յունարէնէն: Օրինակ, Դաւիթ Անյաղթ Կիլիսիոփան ակնարկութիւն ըրած է իր «Բարձրացուցէ՛ք ճառքն մէջ (Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1883, էջ 114-117; Համալ. Յայտն. ԺԳ. 11-17: ԺԳ. 1: ԻԲ. 4): Նաեւ Ապաթանգեղոս պատմիչ (Վե՛նետիկ, 1862):

էջ 74-75: Հմմտ. Յայտ. Ե. 9) եւ Մովսէս Խորենացի՝ որ իր դրած Հռիփսիմեանց Ներբողին մէջ, տեղ մը գրեթէ բառ առ բառ առած է Յայտնութեանէն: Ահա դա՛ չարան Սուրբ Ի Լիբանանէ, զարդարեալ ի լոյս վա՛յելու, արկեալ գիւրեաւ, զԱրեգակն, եւ զԼուսինն, ընդ ոտիւք» (Մով. Խորենացւոյ, Մատենադարան, Բ. տպ., Վենետիկ. 1865, էջ 306): Նաեւ Ս. Աստուածածնի ծնողաց՝ Յովակիմայ եւ Աննայի» շարականին մէջ (ճաշու շարական ԳԶ. Շարական Զեռաց, տպ. Սրբոց Յակոբեանց յերուսաղէմ, 1936. էջ 23) յայտնուի կ'երգէ Մովսէս Խորենացի. «Որ եւ բարձրութիւնս երկ'ից բարձր բա՛նիւք բարեբանին սրբուհի. Ի Լիբանանէ դիմեալ Հարսն զգեցեալ աթօռ. զԱրեգակն արկեալ ըգինւ, եւ ընդ առիւք ըզլուսինն ըստուերատեանս»: Համեմատենք Յայտնութեան ԺԲ. դիտեն առաջին համարին՝ լեւտ, որ այսպէս է. «Եւ Նշա՛. մեծ երեւեցաւ յերկինս. կին մի արկեալ գիւրն զԱրեգակն, եւ Լուսին ի Ըրբոյն առից նորա»:

Է. դարուն Ան՛իա Երեմիայի Հայոց գիտնական վարդապետ իր Ս. Գրոց ցանկին մէջ թելուծած է Յայտնութեան Գիրքը (Տես «ՍԻՈՆ», Խ. Տարի, Թիւ 2-3, էջ 85):

Ժ. դարուն՝ Ս. Գրիգոր Նարեկացի (951-1010) Հայոց մէջ առաջինն է որ յայտնապէս վկայութեան կոչած է Յովհաննու Յայտնութիւնը եւ անկարկութիւններ ըրած: «Երգ երգոց»ի մեկնութեան մէջ երկու ա՛գա՛մ յիշած է Յովհաննու Յայտնութիւնը. «Զի եւ Պաղտիս սակաւ տեսութիւնն շրտոյց եւ կուրացոյց զնա յաջոցն, որպէս Յովհաննու Առաքելոյն ի Տեսիւնն», զարձեալ՝ «Որպէս եւ ասէ ի Յովհաննու Աւետարանչի Տեսիւնն՝ զամենայն ցեղ ուրոյն ուրոյն թուե-

լով երկոտասան հազար ի մի մի ցեղն»: Դարձեալ՝ Ս. Խաչի եւ Ս. Աստուածածնի Ներբողին մէջ կ'ըսէ. «Դառն հեծեալ ի ճերմակ երկվար» (Հմմտ. Յայտ. ԺԹ. 19): Իսկ Նարեկ Աղօթամատենին մէջ (Գլ. ԿԶ. Դ. Հատուածի վերջաւորութեան, եւ Գլ. ԼԹ. Գ. Հատուածի մէջ) յիշած է՝ հազարամեայի, դատաստա՛ի եւ մարդոց ծածուկ մեղքերուն գրուած ըլլալուն եւ լրիւ դրոշմուած՝ իսկոյն երեւան՝ զալուն մասին:


ԺԱ. դարու Հայոց մեծ իմաստասէրն Բէն Յովհանն էս Սարկաւազ Վարդապետ՝ իր «Յաղագս Գաւառայութեան» եւ «Յաղագս Մասանց Պատուոյ եւ Պատկերաց» ճառերու մէջ անկարկութիւններ ըրած եւ յիշած է, Յովհանն ու Յայտնութեան (Սոփեբք Հայկ. Գ., էջ 27-28: Հմմտ. Յայտ. Ե. 8: Ը. 3):

ԺԳ. դարուն՝ Մեծն Վարդան վարդապետ իր «Առ զԵրրորդ բա՛ն որ ասեն թէ քահանայք, խոստովանութիւն ոչ դիտեն առնուլ՝ առ այդ պատասխանի» ճեռադիր դրութեան մէջ (ճեռադիր Թիւ 1085, էջ 415. Սրբոց Յակոբեանց Զեռացիատուն, Երուսաղէմ) մէջբերում կ'ընէ, ըսելով. «Որպէս ասէ Յովհաննէս ի Յայտնութեան՝ թէ անկայ առ ոտս Հրեշտակին, եւ նա՛ ասէ յոռն կաց եւ մի երկիրպազաներ ի՛ձ ալ, Աստուծոյ երկիրպազ դի ծառայակից քո եմ» (Յայտ. ԻԲ. 8-9):

Իսկ ԺԴ. դարուն ապրող Սուրբ Գրիգոր Տաթեւացիի մասին դրած էինք, թէ ընդունած էր Յայտնութեան Գիրքը:

Այսքան ծանօթութիւն բաւական է Յովհաննու Յայտնութեան Գրքին մասին, տիեզերական հայրապետներու եւ Հայոց վարդապետներու վկայութիւններով:

ԴԱՆԵԼ ՎՐԻ. ՇԱՄԵԼԱՆ



«ՀԱՅՐ ՄԵՐ»Ը

Նմանողութեամբ ժը

Արեւը կը ծագի...
 Ու մէջ ծաղկըններուն
 Յաժեպով ժիր մեղուն՝
 Դրուագով բզզանքի
 Կը փողէ ազդուապէս.
 «Հալը մեր որ յերկինս ես»:

Հննդուկը կաթոգին՝
 Կըտուրին մօտ կեցած,
 Խոտին տակ միգամած՝
 Ծղրիթն ալ, իր կարգին,
 Պաշտումով մրցակցի՝
 Ի՛րսեմ. «սուրբ եղիցի»:

Թերթերովն իր բնուշ
 Կը շրշէ վարդն, «անուն»,
 «Քո» յարեց երազմայն
 Պլպուլն երգով անուշ
 Շաղն ալ շողին ներքոյ
 Կրկնեց նոյն վանկը. «Քո»:

Ծովէն կը դաշնակի՝
 Զերդ ձայնի հալոցէ՝
 Մըմունջ մը, «եկեցէ».
 Ու բոյրով կնդրուկի
 Սիւքն «արքայութիւն Քո»
 Շշրնցեց համ ու գոհ:

«Եղիցին կամք Քո» խօսքն՝
 Որ կուգայ բարձունքէ՝
 Անտառի նըւագ է,
 Ուր բաղեղը սողուկ,
 Յաժ թուփն ու պերն մայրին
 Նո՛յն տենդով կը հրահրին:

Լերտոյսը գուարթագի՛նս
 Երագուն ու թեթեւ
 Վերելի առած թեւ՝
 Կ'երգէ, «որպէս յերկինս»,
 Ու արտն ալ կը բերկրի
 Զայնելով, «եւ յերկրի»:

Բիւր ձագեր ագռաւի
Կը կռչեն մեծադորդ
«Ձհաց մեր հանապազորդ».
Նո՛յն տենչով ծարաւի
Ամէն բոյն՝ ամէն ձոր
Կ'ըսեն, «տո՛ւր մեզ այսօր»:

«Թող մեզ ըզպարտիս մեր»
Կը հայցեն արծուին հետ
Անգղ՝ առիւծ, ակընդէտ
Յառելով դէպի վեր,
Արեան ու շաղիղի
Որսն ըրած կատաղի:

«Որպէս եւ մեք թողումք»
Կը հծծէ հօտն, որու
Կեանքը՝ որկորներու
Շըւա՛յտ է կերուխումք.
«Մերոց պարտապանաց»
Կը փոփսան աղն ու հաց:

«Եւ մի՛ տանիր ըզմեզ»
Կ'ըսեն որդն ու մրջիւն,
Մի՛, մի՛ «ի փորձութիւն»
Կը յարէ տատրակն հեզ,
Որ աղէտքն անհետի
Կոխման ու քակարդի:

«Այլ փրկեա՛ ի չարէն»
Համերգն հանդիսաւոր
Արձագանգ գըտաւ խոր
Կապոյտ այն Տաճարէն,
Ուսկից յորդ կը հոսի
Կեանքի գետն ու լոյսի:

Իսկ մա՞րդը.— Անխըռով
Կը խորդա՛յ տակաւին,
Զը լըսեր ձայնն հաւին...
Մինչ բնութեան բարբառով
«Հայր մեր»ն իր խորհուրդէն
Մերկացուած է արդէն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՄԸ ՀԱՅԱՏԱՌ ՊԱՐՍԿԵՐԷՆ ՈՏԱՆԱԴՈՐԸ

«ՍԻՈՆ»ի փետրուար – Մարտ 1966 ճիւղային զեղեցիկ թիւի մէջ՝ նուիրուած Հայերէն Աստուածաշունչի տպագրութեան 300-ամեակին, ուշադրութիւնս դրանց 168րդ էջին ստորեւ Հայաստան պարսկերէն գոյգ տող ուսանաւորը («Բէյթ»), որ մաս կը կազմէ «Յիշատակարան»ի մը՝ գրուած 1699-ին:

Գրիչն է Ղուկաս Դպիր վանանդեցիս որ ծանօթ է պարսիկ լեզուին եւ գրականութեան, քանի որ յիշած տողերը Իրանի մեծաւշակ բանաստեղծ Սաստիի նշանաւոր «Կոյեստան»էն են, միայն թէ պէտք է ուղղել այսպէս:

Օմր բարձ ասք օ ասքարը քաւնուց,
Ա՛ղաքի մանդ օ խալէ զըրբտէ համուց:

Թարգմանութիւնն է.

Կեանքը միւս է Յուլիսի արեւիք (տակ),
Շատ քիչ մնաց եւ սղամ (տէրը) դեռ ամեղ է:

Բերթուածին Նախընթաց երկու տողերն են՝

Բարգը էշի բէ գուրը խիշ ֆարաք,
Քաւն թէյարապ գէ փաւ քօ փիշ ֆարաք:

Նիւ Եսքէ,
1 Յունիս 1966

Թարգմանութիւնն է.

Թուշակ (պաշար) դուռ իմիդ գերեզմանդ
զրկէ,
Մէկը ետեւէդ չի բերեր, դուռ առաջուց զրկէ:

Տողերուն իմաստն է՝ «Աշխարհը դեռ թողած՝ առաջուց գերեզմանդ զրկէ կենդանի մնալու թուշակը»: Այլ խօսքով, «Անունդ անմահաց՝ող դուր կատարէ այստեղ, դի մեկնելէդ յետոյ ուրիշ մը ետեւէդ Համբաւ չի բերեր»: Միտքերու զուգորդութեամբ կը հետեւի վերի «Բէյթ»ը (երկտողը), ըսելու Համար՝ թէ «Կեանքը միւսի պէս Հալելու, վերջնաւոր մօտեցաւ եւ իր տէրը դեռ անհող կեցած մնալու՝ յիշատակ մը ձգելու մասին չի մտածեր»:

Արդարեւ, մեր Ղուկաս Դպիրը մտադիր եղած էր Պարսիկ իմաստասէր բանաստեղծին յորդորին՝ գրելով «փոքրիկ զբոյն»ը յոյժաւ «մերազնեայ վաճառասէր եղբայրներուն»: Ա՛րկա հետեւած էր Սաստիի իր բառին՝ անհող լըլլալու երբ կեանքը միւսի հանգոյն որպէս թէ փուռած կիզիչ արեւին տակ՝ արագօրէն կը սպառէր, կը հալէր: Եւ ահա այսօր իր անունը կը յիշուի նշանակելի շարագարձի մը առթիւ: Ոնկացի մարդ:

ՄԻՀՐԻՄԱՏ ԹԻՐԵԱՔԵԱՆ,

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅՈՒՄ 1641 ԹՈՒԻՆ ՏՊԱԳՐՈՒԱԾ «ԽՈՐՎՐԴԱՏԵՏՐ»Ը

Աստուածաշունչի տպագրութեան 300-ամեակի առիթով, տեղի է ունենում մեր նախնեաց երախտաւոր գործիչների կենսերին ու գործին, որոնք Հայ ժողովրդի լուսաւորութիւնն ու զարգացումը, իրենց կենսեքի նպատակը դարձնելով՝ տքնեցին ու ճգնեցին, որպէսզի ազգը յարատեւի:

Այս երախտաւորներից մէկն է Նոր-Ջուղայի առաջնորդ Սալատուր Կեսարացին, որ եղել է Աստուածաշունչը տպագրող Ռսկան Վարդապետի աւագ ուսուցիչը: Մի զարգացած ու լուսամիտ վարդապետ՝ որ 1620 թուին որպէս նուիրակ եկել է Նոր-Ջուղա եւ ժողովրդի խնդրանքով ստանձնել Ս. Ամենափրկչեան Վանքի առաջնորդական պաշտօնը:

Կեսարացու ջանքերով 1639 թուին Ջուղայում հիմնուած է մի տպարան, ուր 1641 թուին տպագրուած է «Հարանց Վարձ» աշուտով ստուարածաւալ՝ 705 էջանոց գիրքը: Յաջորդ 1642 թուին՝ «Ատենի Ժամագիրք»ը, իսկ յետոյ՝ 1647 թուին, Կեսարացու վախճանութից եւ նրա աշակերտ՝ Եւրոպայում տպագրական աշխատանքներին ծանոթացած Յովհաննէս Վարդապետի վերադարձից յետոյ՝ «Գարգատուար Աղարխայի» գրքովը:

Յովհաննէս Վարդապետն իր առաջին գրքի տպագրութիւնից յետոյ ձեռնարկում է տպագրելու վաղուց ցանկալի Հայերէն Աստուածաշունչը, որ մնում է թերի՝ ներքին հակառակութիւնների պատճառով:

Այս առթիւ պատմագիր Սալատուր Վարդապետ Ջուղայեցին, Կեսարացու տպագրած


գրքերի մասին խօսելուց յետոյ աւելացնում է.

«Ուր եւ ընդ բազում գրեանց՝ որք տպեցին, սկսան ընդ որոց եւ տպել զԱստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչեւ ցայսօր ի միջի մերում, սա կարի լաւագոյն ունելով զթուղթն եւ զգիրն, քան զառաջին տպեալ գրեանսն» («Գառնութիւն Գարսից», Վաղարշապատ 1905, էջ 121):

Մինչեւ այժմ այն կարծիքը կար, որ Ջուղայում 1641–47 թուերին տպագրուել են միայն վերոյիշեալ երեք լրիւ եւ մէկ թերի գրքերը: մինչդեռ զտնուած մի նոր գրքով պարզուած է որ Սալատուր Վարդապետի 1641 թուին տպագրած «Հարանց Վարձ» գրքի հետ կամ դրանից յետոյ, տպագրուել է նաեւ մի այլ գիրք՝ «Որհրդատետր» աշուտով:

Գիրքը բաղկացած է 48 էջից կամ 24 թերթից, բաժանուած է վեց պրակի, իւրաքանչիւր պրակ՝ չորս թերթ: Համարակարգւած է հայկական տառերով՝ ա-խ-է (1–47), էջերի մէկ թուի պահանս առաջացել է էջ 44-ի (խդ) եւ էջ 45-ի (խե) միջոցում չհամարակալուած (բաց թողնուած) մէկ էջից:

«Որհրդատետր»ն ունի 23×18 սմ. ծաւալ, նիւթը հաստ դեղնաւուն թուղթ է, տպուած երկսիւնալ: Առաջին էջի ա ախնակի վերելում ունի մի ճակատագրող: Տառերը շարուած են խոշոր գրերով, իսկ վերնագրերները՝ մանր բոլորագրերով: Մանր գրերը նմանում են ՀՀարանց Վարձի տառերին, իսկ խոշոր գրերը՝ «Ատենի Ժամագիրք»ին:



Եջ սը շնորհդատետրձն:

Գործ է անուած սեւ եւ կարմիր թանաք:
Կարմիր թանաքով են էջ ա, դ, ե եւ ը էջերի
մի քանի վերնադիրներն ու մեծատառերը:
Մեծատառերից մի քանիսը շարուած են
հաւքադրերով:

Գիրքը վերջում շատ ժլատ ձևով ունի
մի երկտողեան յիշատակարան, զոր բերում
ենք ստորեւ.

«Ով սբ. Պատ(ա)ր(ա)զօզ յիշեալ զխա-
չ(ա)տուր վ(ա)րդ(ապե)տս եւ զմ(ա)յր իմ
թվ. ՌՂ (1641): Կ(ա)զմ(ե)ց»

Նոր-Ջուլա

Գրուածքի վերջաւորութեան վերջակէտ
զրուած չէ, որ տեղի է տալիս կարծելու թէ
թերթ է պակասում. բայց յիշատակարանի
գոյութիւնը մասամբ ցրում է այդ կաս-
կածը:

Սոյն «Նորհրդատետր»-ից մինչ այժմ,
պտիւռել է իրկու օրինակ, որոնցից մէկը,
գտնուած է Երեւանի Մաշտոցի անուան Մա-
տենադարանում (թիւ 1702), իսկ երկ-
րորդը՝ տողերս պրոդի մօտ:

Լ. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԻ ԱՆՅԱՅՏ ՏԱՂԱԲԱՆ

3.

Ներգիծական ոտանավորներ

Երգիչ Դանիելն ո՛չ միայն բարոյա-
խրատական, սիրոյ, օւրախութեան տաղա-
րան է, այլև իրանաւայ գրականութեան
լուսագոյն երգիծաբաններից մէկը: Նրա ըս-
տեղծագործութիւնների մէջ կան երգիծա-
կան բովանդակութեամբ ոտանավորներ, ու-
րոնք թէև թուով շատ չեն, բայց իրենց սը-
րամիտ երգիծանքով ու կենցաղային ընոյ-
թով հետաքրքրական են: Զիշդ է, այդ տա-
ղերը չեն շօշափում քաղաքացիան, հասարա-
կական խնդիրներ, բայց պատկերում են իր
ժամանակի կերպարների ու տիպերի բացա-
ռական գծերը, նրանց թերութիւններն ու
պակասութիւնները: Այդ տեսակէտից էլ ա-
ռանձին արժէք ունեն:

Այդ ոտանավորների էական յատկանիւյր
մեղով երգիծանքն է եւ սրամիտ հեգնանքը:
Այնտեղ տաղարանը հումորով գծել է իր
ժամանակի աշխատանքային, վատ, անհամեստ
պառախի՝ Գուլիարի դիմանկարը, որ ո՛չ մի-
այն հայհայտ է իր համեստ, առաքելի
հարսին, այլև իր ձեռքի ամուր փէտով թա-
կում է:

«Պատաւ Գուլիարն իր հարսի»

Կը քայտայէր իր երեսիս:

Ձեռնում ունէր միշտ ամուր փէտ:

Հայ կը քակէր այդ պատուը:

Տան խաղաղ, երջանիկ կեանքում փոր-
ձանք դարձած պառաւն ո՛չ միայն ամէն օր
հարսի հետ «կուսուում» է, այլև հեգնում,
արհամարում եւ անիծում է նորիսկ իր
բարի ու աղին մարդուն, իսկ անմեղ, պայ-
ծառ ու անուշ երեխաներից ծնծում:

«Մարգի տնումն էր Յարաբիւն,

Կ'սէր միշտ. Թո՛ւ ինքն ինքն մարդուն:

Ո՛չ հում իմես ո՛չ էլ ցարթում:

Միշտ բողբոջ էր պատուը:

Տաղարանը պառաւի բերնով ծաղրում,
քննադատում եւ նախատում է նաեւ ժամա-
նակի խաւարի եւ տղիտութեան մէջ խա-
խափող աշխատանք, ապերախ տղաների,
անհամեստ, «լըբաղած» աղջիկների, անաղ-
նիւ ու անբեւ հարսների եւ նրանց մայ-
րերի կենցաղային յոռի, պակասուոր, թերի
կողմերի աշակերտ հումորիստական երան-
դաւորումներով:

«Ընծ տղան էի չի ամուսնում,

Հարսն էլ էի միշտ իմնի չանջում:

Ի՛նչ երեսն կայնում ինչում,

Կ'անէր ցանցառ էդ պատուը:

Աղջկերդ էի լըբացել ին,

Երեսներն ողջի մօտ բացել ին,

Զիշդ կարծես վայրենացել ին:

Կը կընկըսայ վատ պատուը:

Ինչ չափ խրատում, զնաք բերնի համը,

Լընկերի էտ մեր հարսի ծամը:

Կըտրեմ մրա սպիտակ ծամը,

Որ չը ծըռի հարսիս պատուը:

Միշտ հարսիս կը խրատ,

Թէ կեբոջդ դու միշտ ատէ:

Պակուածն տես ինչ վատ է,

Այգպէս անիով էր պատուը:

Տաղարանը զանգուշական տողերով պատ-
կերում է պառաւի բարոյական սայթաքում-
ները: Նա փոխանակ իր ընտանեկան
կեանքի վեհութիւնը բարձր պահելու, իր
զէխ եւ անվայել կենցաղով նաեմացնում է

իր անուան ու պատիւը: Երգելը սուր երգի-
ծանքով է: որովհետ տողերով զծել է նաեւ
էտաւէր, ժենամիտ պատաւի սիրականներէ՝
Հախվէրդի, Ղազարի, Ակոփենց Մանուկի,
Սուքիաս Ծառուկի եւ իր Հոգեւոր կոչման
վեհուժինն արտատաւորող, վատաւարք Տէր
Մարութ քահանայի դիմանկարները, որոնց
սրտանց սիրելի է փառասէր չար պատաւը:
Ահա նրա վկայութիւնը:

«Շատ կը սիրեմ իմ քանդակը,
Երանի էր այդ վայելումներ-
Հարկըներով ունէի ընկերներ,
Ամենիմ էի սիրելի, կ'սէր պատաւը:

Տէր Մարութք քի իմ էր սիրում,
Հախվէրդի էլ քի մամակ գրում.
Ղազարն էլ քի մեր բազը քրում,
Ամեն իմ խաբար, կ'սէր պատաւը:

Հիմա չունեն ես դադր ու զիմ,
Կը յիշեմ Անդիանց Մանուկին.
Կամ Թէ Սուքիաս ու Մառնիկիմ,
Որքան կը սիրեմ իմ, կ'սէր պատաւը:

Այսպէս է դանդաղաբար հաշտակող
մաքուր, անարատ Հայ, օջախին պատիւ չըն-
րող, ընտանեկան սրբութիւնները, արհա-
մարհող, բարոյապէս բնկած, անաղիւ, աշ-
խատեցող ու փառասէր պառաւը, որ ճառ-
նում է մարդու Հոգին» եւ անվերջ հանդիստ
չի տալիս:

«Կ'սէր. իմ պէս մի խանութ-խաբար
Ձի էլի զամար քի պէս մարդում.
Ես Գուլիմար, զու՝ Արթուր,
Վաս ըզբալով եմ կ'սէր պատաւը:

Տաղարանը հոգորի միջոցով ծաղրի է
էնթարկել նաեւ ժամանակի տնաքանդ կա-
նանց: «Փաշլուլին ասում ին՝ կին առ» ու
տանաւորի մէջ որոշ քառեակներ երգիծա-
կան երանգաւորում ունեն, սակայն Հիմնա-
կանում քննադատում է եւ դատապարտում
առն չափումը, ապա՝ ու անաւեր կանանց,
որոնք իրենց տղիւտութեամբ խորտակում են
ընտանեկան երջանկութեան ներդաշնակու-
թիւնը: Դրա լաւագոյն օրինակը բարի, ի-
մասաւն աւ խելացի Փաշլուլի կեանքի պատ-

մութիւնն է: Շատերը նրան խորհուրդ են
տալիս պահուել, որովհետեւ դա մարգա-
րէ՛ր երի սահմանած կանոնն է եւ սուրբ գրքի
պատուէրը:

«Միմ օր եկամ առիմ. փաշլուլ,
Դու խելով ես, բա ինչո՞ւ ես քույ.
Պատառն ի՞նչ է, կիմ չես առնում,
Անց ես կացնում օրերդ զուր:

Հասակդ անց է բառատունից,
Շահածդ ի՞նչ է այն աշխարհից.
Վատնիլ ես քո բոլոր կեանքդ,
Ձուսնս զաւակ ու կողակից:

Այսպէս, Հեռատես ու խելօք Փաշլուլն
գիտէ, որ ամուսնութիւնը մի վեհ եւ սրբա-
ղաւ պարտականութիւն է, իսկ պահուելու
եւ կնոջն երջանկացնելու համար անհրա-
ժեշտ է նախ՝ տուն ունենալ եւ ճշգրտը կայ-
քը՝ պատրաստել, ուստի միանգամայն ճիշդ
հասկացողութեամբ տրամաբանում է.

«Միմնի որ ես տուն շինեմ.
Բոլոր կայքը կարգի դնեմ,
Էմ ծամանակ ես լուր կը տամ.
Որ կիմ առնել կ'ընդունեմ:

Մարդիկ շատ ճիշդ են: Կոնում Փաշլուլի
խօսքերի էութիւնը եւ նրան, Հարուն Ռա-
շիդի օգնութեամբ, տալիս են անհրաժեշտ
ծախքերի ոսկեղբարմը: Բայց նա ճարտարա-
պետական շատ տարօրինակ ձևով ու ոճով
տուն է պատրաստել տալիս:

«Ինչպէս էր մա տուն պատրաստել,
Առատազմ քայ, յատակն վեր.
...Տամ առատազ մերքի բերաւ.
Ու յատակը կտրեմ արաւ.
Բոլոր տունը քարաշինեց,
Շինարարութիւնից դադարաւ:

Շուտով Փաշլուլի մօտ է գալիս իր Թա-
կալին բարեկամ Հարուն Ռաշիդը եւ տե-
նում շինարարական արուեստի ալլանդակ
ոճով կառուցուած տան պատկերը: Նա ասա-
տիկ զայրացած յանդիմանում է Փաշլուլին:

«Ինչ եւ արի, ասա Ռաշիդ,
Շալա տեսնեմ քերթուկ կաշիդ.
Ամբողջ վատնեցիր փողերը,
Ամէնը քֆուս եմ դառաւ քաշիդ».

*Փաշլուլը, սակախ, կատարեալ համբ-
բուժեալոր եւ մեղով հումորով պատասխա-
նում է.*

«Փաշլուլն ասաւ. Ռաշիդ եղբայր,
Համբերութեամբ պատասխամ տա.
Այսպիսի տունն ինձ է հարկաւոր,
Զէ՛ որ ասել ես ինձ դա՛ կիմ առ:

Այն կիմն, որ ինձ է գալու,
Զէ՛ որ տունն է ճաշ շրջելու.
Ինչ որ ուզի, ինչքան շրջի,
Տանս հե՛մն է ճաշ շիտկելու:

Այն ժամանակ միշտը կը լինի.
Ու ամենից հեշտ կը լինի.
Կիմն ամուսն տունը տակն ու վեր,
Ռաշիդ եղբայր, վիշտ մի՛ լինի».

*Տաղարան, Դանիէլը Հայ երջանիկ ընտա-
նիքների քայքայման հիմնական պատճառն
ուսումնասիրելով եկել է այն եղբակացու-
թեան, որ դրա համար պատասխանատու են
եւ յանցաւոր թէ՛ ամուսինը եւ թէ՛ կինը:
Նա դատում է, որ նրանք իրենց հեղինակու-
թիւնը չպէտք է չարաչար գործածեն, այլ ի-
րար հասկանալի եւ իրենց սրտում ներդ-
րամտութեան, իրար օգնութեան ու փոխա-
դարձ սիրոյ ու յարգանքի դիտակցութիւնը
դարգացնեն: Այդ տեսակէտից ուշադրաւ է
«Աղբոր դարձացումը» խորագրով ոտանա-
ւորը, ուր աղբորը լեզու է առնում եւ սրա-
միտ պատկերացումներով ու համեմատու-
թիւններով զննարդատում է թէ՛ ամուսնու
եւ թէ՛ կնոջ թերի, բացասական յատկու-
թիւնները, նրանց անմտութիւնը, անհնա-
զանդութիւնը, անազնուութիւնը, թեթեւու-
թիւնը, ցուցամոլութիւնը եւ խաբէութիւնը.*

«Ախրան ուսաւ. Զարմանում եմ մարդկանցէն,
Թէ ի՞նչ տեսակ այս օրերին կեանք կ'անցնեն.
Շատ կը վախենամ իւրեանց կանանցէն,
Պատիւ երբեք բալբալով չմամայնեն:

Մարդ եւ կիմ միշտ կուսում եմ,
Ուզիդ ճանապարհից միշտ ծաւում եմ.

Կործես ցիխ ու սղլի մէջ փուսում եմ,
Հայ տանգոմֆի եւ չարաքամֆի մէջ եմ:

Աղամորդի էք, խելից հարուստ,
Հէ՛րոյ յիմէ կը տո՛ք փախուստ.
Կ'ըմի ձեզի այդպէս ապրուստ,
Ռո՛ւստի կամայք չերկնչեն:

Իրեւ կը տա՛ք դու՛ք ձեռք կամանց,
Որովհետեւ չունէք սէր ուսմանց.
Խրատէ՛ք դու՛ք լուրջ՝ ձեռք կամանց,
Որ գիտակցաբար ձեզ ճանայնեն:

Բաց էք թողնում իրանց բե՛փն,
Պատրաստում եմ քէ՛յն ու կոփիմ,
Հագուստները ճոր եմ, չունեն մէկ կիմ,
Կրծքերը բաց եմ, քմա չամանչեն:

Ուր որ կ'ազնիւ կը քամայնեն,
Կամէից ազատ շատ ամկալի եմ.
Ուղիդ չգնամ, ամբողջ ձայն եմ,
Միշտ օտարին իրենց կը կանչեն:

Դանսի(պարի) մէջն միշտ հազիր եմ,
Զպարէն մրանց հետ, որ գազիր եմ.
Ողբ ամկալի կեանք կը իրեն,
Հայրաք չկայ, որ խանջ՝ խնչեն:

Ինձ՝ ախորժեւ, դու՛ք մէկ ճայէք,
Կառավարեմ տա՛նս հաւ, տա՛նս վառէք.
Գոնեայ ինձնից ուսում ասէք,
Կիմ պանիլ մի մեծ բռն չէ՛ք:

*Ժողովրդասէր տաղարանը երգիծարանի
նրբին երանգաւորումներով պատկերել է
նաեւ բնագորութեամբ տարբեր գծերով եւ
ստանձնայատուկ նկարագրով օժտուած
մարդկանց էական յատկանիշ՝ երբ: Այդ ո-
տանաւորով երգէ՛ր դժել է գլխաւորապէս
հասարակական կերպարներին թէ՛ դրական եւ
թէ՛ բացասական արժանիք՝ երբ ապալիս
ընդունումներով.*

Մարդ կայ իւր ազգին եւ պարծանք,
Մարդ կայ ազգին խիտ ամօքանք.
Մարդ կայ կը վերացնի ազգի վտանգ,
Մարդ կայ մտանիչ, ո'նց մուշա:

*Տաղարանը իր զննարդատական շնոր-
հում է գլխաւորապէս մարդկանց արատ-*

ներքի ու պակասութիւնների վրայ, մերկացնելով նրանց մտաւոր անկարողութիւնը, ակարամտութիւնը, դատարկամտութիւնը և անձամտութիւնը:

Մարդ կայ յիմար-յիմար միշտ խօսում է.

Մարդ կայ յիմարի մարմնոյն փստոսում է.

Մարդ կայ եայլամ, մարդկային կերպարամբով.

Դքա խօսումէք իրեն կը վկայէ:

Այս սողերը վկայում են, որ Դանիէլը հմուտ հոգեբան է. նա կարողացել է շատ լաւ թափանցել իր ժամանակի մարդկանց

հոգիների մէջ եւ հմուտ գրչով պատկերել նրանց ընտելութեան, խառնուածքի էական ու յատկանշական գծերը: Իր երգիծական որոշ քառեանքներով նա ծագրում է ու քննադատում նաեւ մարդկանց ծայրայեղ դրամատիկութիւնը, շահամուտութիւնը, ազահութիւնը, կնամուտութիւնը, շարագործութիւնը, իսկ այլ քառեանքներով հեզնանքի եւ ծաղրի ենթարկում փողաւոր այն արդէտ, անարժան կարուստներին, որոնք կեղծ ազգասէր են եւ ազգից մնում են զհեռու ու բաժան:

4.

Սիրոյ տաղեր

Տաղարան Դանիէլի գրական ժառանգութեան մէջ ուշագրաւ տեղ են գրաւում սիրոյ տաղերը, որոնց նիւթն երգչի հոգեկան ապրումներն են, նրա քնարակա՛յ յոյզերը, խոհերն ու տրամադրութիւնները: Այդ ոտանաւորները գրաւիչ են իրենց անպակաս պարզութեամբ, սահունութեամբ եւ արեւելեան ճոխ պատկերաւորութեամբ. էական Կծեր, որոնք կազմում են նրա տաղերի հիմնական յատկանիշները եւ առանձին երանգ են տալիս նրա բանաստեղծական արուեստին:

Այդ տաղերը ցայտուն գաղափար են տալիս ո՛չ միայն Դանիէլի գրական ճաշակի եւ կառուցողական արուեստի էութեան մասին, այլեւ վկայում են որ նա եղել է իր ժամանակի սիրոյ երգիչներից մէկը, ձիջդ է, այդ սիրերգները նորութիւններ չեն եւ չունեն տաղանդաւոր սերունդներ՝ Յովհաննէս Թլկուրմանցու, Գրիգորիս Աղթամարցու, Նահապետ Փուշակի, ո՛չ էլ Նշանաւոր բանաստեղծ-նկարիչ Նալաչ Յովնաթանի տաղերի լիրիկական խորութիւնն ու գեղարուեստական շեղութիւնը, բայց տաղասաց Դանիէլը եւս ինքնուրոյն ձեւով է արտայայտել իր քարական յոյզերն ու խոհերը, որոնք ապրած ու վայելած սիրոյ պատկերացումներ են:

Տաղարանն ունի իր սրտի սիրած եարբ, որ իր գեղեցիկ յատկութիւններով նրա հա-

մար մի պաշտելի էակ է, միաժամանակ նրա կեանքի երջանկութեան էական մասը: Եւ նա վառ գոյներով եւ արեւելեան բեղուն համեմատութիւններով նկարել է իր զնաղելի, շաղիղդ եարի գեղեցիկ պատկերն ու հոգեկան բարեմամտութիւնները, միաժամանակ դժել է իր սիրային անկեղծ, խոր ապրումներն այսպիսի տողերով.

Երբոր տեսայ սիրականս, սրտիս փքեց կայծակի պէս,
Տեսէր փայլում աւ գեղեցիկ, կնճատու արեգակի պէս.
Էմբան ամուշ, շատ հետաւէտ բթօր աւ խումկի պէս,
Շատ փափակ աւ համիլի Եղեմ դրախտի ամուկի պէս
Կոկոմիլ է. սիրում քացուել, տեսն հնգեմաւ յայտնակի պէս.

Սիրում է մաւուր ու շատ վճիռ, դրախտային վտակի պէս:

Բոլոր աշխարհի սիրունների քաղնիքն ես, Պագիլի.
Էմ պատմական արածը հիմ, որ կը պատմեն, դու
եւս, Պագիլի,
Ինչ որ արծի երկրագունդը միայնակ, ձորա գիմն ես,
Չունես հաստօր քո մտն, դու քարճր գահին ես,
Պագիլի,
Դու ես պատճառ կնճողամուքեմ, ի՛նչ հազիմ ես,
Պագիլի:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

Փեհլիվի
(Շար. 3)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՕՐԻՐ ԵՒ ԴԵՄՔՆԻ: Զարուհի Գալեմ-
Փարեան. Տպարան Սրբոց Յակօբեանց,
Երևան, 1965:

Շքեղ ալպոմ մըն է այս Հատորը, ուր
բոլոր քույր եկած են տաղանդաշատ գրագի-
տուհի Զարուհի Գալեմֆարեանի արտի եւ
մտքի բերեցողությունները: Քերթուածներ,
արձակ էջեր, անձակաճ յիշատակներ, օ-
րագրի էջեր, ծանօթ դէմքեր, գրախօսու-
կաններ, ազգային հոգեր եւ ամերիկեան
տպիւնորութիւններ՝ աւելի քան քառասուն
տարի երու վրայ ծաղկած, կը կազմեն
պոետը շարանը այս ալպոմին, որուն իւրա-
քանիւր պատկերը մէկ փշրանքն է այն-
պարզ գրագիտուհիի հոգիին:

Օրքին Հեղինակը ներկայացուելու պէտք
չունի. ան մեր գրականութեան երեք սե-
րունդի մտապատկերներու մէջէն քալած
գրաւորուհի է, եւ երբեքն հետ ալ պատ-
ւով վճարած է իր մտքի տուրքը: Շրաղներ,
սէրեր, հոգեկան ընկումներ, տպաւորու-
թիւններ, խաղաղութիւններ, եւ գա-
նձ ուրիշներուն հաղորդելու փոյլին ու
յոժարամտութիւնը, իւրաքանուկ արուես-
տով մը կը համադրուի, զՕրքը եւ Դէմքերը
Հատորին մէջ: Տարիներով Հաղարներու
սրտն խօսած, հոգի երու մէջ երազ եւ
քաղցրութիւն սփռած գրչի վաստակաւոր
մըն է Զարուհի Գալեմֆարեանը: Իր տա-
ղանդը կեանքի ամենատիրական վերբե-
րումներուն մէջ յաճախ, յարթական ու-
տումներ կը կատարէ:

Գրագիտութիւնը ամբողջին է, աբ-
ւետիկ անհատին: Այս զոյգ բառերը գրեթէ
հակոտնեայ յղացքներ են: Առաջինը՝ ինք-
զինքը ուրիշ երու վրայ բաշխելու հետեակ
աշխատանք մըն է, երկրորդը՝ ուրիշներէն
դատուելու երկունք մը: Իրիք մը շատ մը
բաներ բլլալէ առաջ անհատականութիւն
մըն է: Մուկ է գրութեանը, երբ անարժէք է
վիճակը: Օրքը եւ Դէմքերը մեզի կու գան

ոչ միայն պայծառ ոճով, այլ նաեւ քաղցր
անհատականութեամբ մը:

Գրելը ապրիլ է իրեն համար, մանաւանդ
այս օրերուն, երբ անցեալն է միակ հայելին
իր ապրումներուն, իսկ գրելը՝ կեանքը այդ
անցեալին: Բոլոր իր առարկայացումներուն
եւ հոգեկան շողարձակումներուն մէջ կը
թրթռայ եւ կը հանգչի գրագիտուհիի մը
սիրուն ու երեակայութիւնը, ամենէն պարզ
արտայայտութիւններուն հազնելով գրա-
կա՝ շնորհ մը՝ որ հրաշքն է իր գրագէտի
հոգիին եւ կրակէ չապիկը արուեստին:

Հատորին սկիզբը դրուած իր քերթուած-
ներու շարանը, իրենց որակէն, ինչպէս
նաեւ գործադրութեան թէքիք կատարե-
լութեան տեսակէտէն դիտուած, թերեւ
չգնահանանք մը որովհետեւ արդի պահանջնե-
րը՝ սակայն անոնք անխառնօրէն բանա-
տեղծ հոգիի մը բխումներն են, Նման ամէն
մանրակազմ արուեստագէտի, Տկն- Զա-
րուհի Գալեմֆարեան եւ իր լաւագոյնը կը
վերապահէ քերթողական արտայայտու-
թեան, որուն մէջ նուրբ պայմանութիւն,
մտածում եւ սահուն լեզու մը դիւար կը
պատկանեն: Ան աշխարհի կը նայի բա-
նաստեղծի հոգով, առանց շղարշելու իր
դպրածները:

Հակառակ իր լեզուի անալթաք ըն-
թալին, իր մտածումներն ու գրացումները
կը ղեկավարուին երկաթէ տիրապետու-
թեամբ: Լեզու մը որուն շնչերակները ցա-
մաք չեն, բայց բխումները դուստ, առանց
աղմուկի եւ ձեւի, առանց յետադարձ ու-
ժա՝ թիգմի եւ հայրենասիրական, հասարակ
տեղիքի, որոնց անդիմադրելի հոգեբէն
սարած են մեր արժանաւորագոյն տա-
լանդներն անգամ:

Իր յեղուցութիւնները, անցեալէ վերա-
կազմումները, ժամանակի դէմքերն ու
մտախոյնութիւնները, մեր գրականութեան
համար պիտի մնան շատ թափ: Տիւտարա-
պաշտ ալլապէս ուրիշ էջեր են իր անարա-
կերը, տրուած ինքնատպութեամբ, որով աչ-
կերեմնիկ ապրումները կը գառնան անխոր-

տակելի իրականություն, այն մթնոլորտին մէջէն որ այդ անձերը կը աղաղակարէ:

Ընդհանուր նկարագիր ունեցող այս քանի մը տողերով, յաւանդութիւն չունինք ներկայացնելու մեծ գրադպրուհիին: Այս տողերու նպատակն է տալ միայն քանի մը յատկանշական գիծեր՝ եւ անոնց թելադրանքով հրաւիրել ընթերցողները վայելելու այս հատորը, որ իր եւ մեր ազգային կեանքի ապրումներուն հանդէպն է, մեծ գրադպրուհիին հոգիին արեւովը լուսաւորած:

ԵՂԻՎԱՐԴ

ՄԻԿՏԻՉ ՆԱՂԱՇ: Աշխատախորհրդամբ
էդ. Խոնգկարեանի: Լաթվիպոլ, ռւք-
ծաւալ, էջ 280, Երևան, 1965:

Ոռնդկարեան էջ 5-ով կու տայ մեղի Նախարան մը, ուր կ'ամփոփէ Մկրտիչ Նազարի մասին եղած կարծիքները ժամանակակից բանասէրներէ: Իր բուն ուսումնասիրութիւնը կը սկիւ էջ 11-ով, որուն առաջին գլուխն է Ժամանակը: Կը խօսի Թիմուրէշիկի Հայաստան կատարած արշաւանքներուն մասին, կը յիշէ անոր կատարած անդթութիւնները, որոնք սակայն մասնաւորաբար քրիստոնեաներու եւ Հայերու դէմ չէին: Կը խօսի նաեւ Հայ Ժողովրդին կեղեքումներուն մասնակից Հայ, իշխանաւորներու եւ հողեւորականներու մասին: Էդ. Ոռնդկարեան սակայն մէկ ջուրով կը լուայ բոլոր Հայ հողեւորականները, որոնցմէ բացառութիւն կը կազմէին լիպրատները: Ան կը գրէ. «Սակայն որքան էլ որ հողեւորականները Ժողովրդին շահագործելու ու կեղեքելու մէջ ետ չէին մտնում...» (էջ 22): Ասկա ճիշդ չէ, որովհետեւ մենք կը անց տալ խիստ խոշոր թիւ մը հողեւորականներու՝ որոնք իրական առաջնորդներ: Էին մեր ազդին, անոր նուիրեալ: Յիշենք Գրիգոր Տաթևացին, Գէորգ Երզնկացին, Յակոբ եւ Սարգիս Լիմպիները, Գրիգոր Ուրթեցին, Թովմա Մեծոփցին, Առաքել Սիւնեցին, Մկրտիչ Նազարը եւ բազմաթիւ ուրիշներ, որոնց՝ Հայ Ժողովուրդին եւ մշակոյթին կատարած

նուիրեալ ծառայութիւնները ամէն գնահատանքէ վեր են, եւ որոնց մենք իսկ մեծապէս երախտապարտ ենք:

Ոռնդկարեան սխալմամբ 15-րդ դարու Հայ գրողներու շարքին մէջ գտաւորած է Կիրակոս Երզնկացին, որ մեռած է 1356 Մարտ 18-էն առաջ: Իսկ Կիրակոս Երզնկացի եւ Արեւելի Յոյն աճծերը չեն (էջ 24):

Էջ 25-ով մեղի կը տրուի Մկրտիչ Նազարի Կիւմիք եւ Գործունէութիւնը: Ոռնդկարեան նոր բան մը չէ աւելցուցած Մկրտիչ Նազարի կեանքին ու դործունէութեան վրայ, որ տրուածին պէս արդէն ծանօթ էր: 1418-ին Մկրտիչ Նազար իր մէկ գրչութեան մէջ կը յիշէ գրիչ եւ սարկաւազ ըլլալը: Ոռնդկարեան կը կարծէ որ ան այն ատեն «24-25 տարեկանից ոչ փոքր» (էջ 27) ըլլալու էր: ՀՀեւեան 1393-1394-ին» (անդ). Սակայն քաղ ծանօթ է որ Մկրտիչ Նազար, «Մինչև հետապնդ գոյով ամաց եղեւ կատարեալ ուսմամբ եւ արուեստիւ, իմաստութեամբ եւ վարդապետութեամբ, քաջ քարտուղար, անհեմեմատ նկարող եւ ամենայն արհեստից ճարտարապետ» (էջ 27): Տարակոյս չկայ որ Մկրտիչ Նազար շատ կոնոխ արդէն հասած գրիչ (քարտուղար), Վաւրանկարիչ (նկարող) եղած է, որ 15 տարեկանին արդէն համբաւեալ եղած է եւ ընական է արտագրած ալ է գրչագիրներ: 1418-ին Յայմատուրքի օրինակութեան ատեն թէն չ'ըսուի որ ատիկա իր սկզբնական գրչութիւնն է, այսուհանդերձ մենք կը խորհինք որ Մկրտիչ Նազար 1418-ին սարկաւազութեան ատեն չէր կրնար 16-17 տարեկանին անլի մեծ ըլլալ եւ որով իր ծննդեան ժամանակը կը զ'ենք 1400 թուականին: Գալով 1418-19 թուականին ամուսնացած ըլլալուն, շատ սովորական բան էր 16-17 տարեկաններու ամուսնութիւնը այն ատենները:

Ոռնդկարեան որ կը սիրէ Հայ հողեւորականներուն կոնսակ բռնապ ինչ որ ինք կը ցանկայ, Կոստանդին Վահագյին կը ներկայացնէ հակասական կերպով: Եթէ Վահագյին իր ըսածի պէս ըլլար, ընական է Մկրտիչ Նազարը յանձնարարականներով Եւրոպայի Պապին պիտի չ'ըզկէր, քաջ գիտ-

չալով Մկրտիչ Նաղաշի հակումները: Բնական է հոս տեղին չէ այդ մասին ծանրանալ, որով կ'անցնենք:

Էջ 32. «ՁՈԳ» հրատարակչի 1394-ի, այլ պէտք է բլլայ 1294:

Էջ 40. Մկրտիչ Նաղաշի կենսագրական այս ակնարկը կ'աւարտի, ինչպէս ըսինք, ուռնց ցարդ գիտցածնուս վրայ նոր բան աւելցնելու: Էջ 41-ով կը սկսի «Նաղաշի Ստեղծագործութիւնը» գլուխը: Էջ 42, ծանօթութիւն թիւ 2, կը կարգանք. «Գրալէմբեարեան, Նոտարը Հայոց»: պէտք է բլլայ՝ «ՓիլոլԱԼԻՄԻԱՆ», Նոտարը Հայոց:

Էջ 68-ով կը սկսի «Նաղաշի Լեզուի ու ոճի մի քանի առա՛ճնացատկութիւնները»: Ասկէ վերջ, էջ 79, «Մ. Նաղաշի գրական կապերը»: Վերջապէս էջ 101-ով կը տրուին «Մկրտիչ Նաղաշի Բնագրերը» որոնց հրատարակութիւնը կատարուած է բազմաթիւ ձեռագիրներու համեմատութեամբ: Ընդամէնը 15 տաղ կը տրուին: Էջ 185-ով կը տրուին Մկրտիչ Նաղաշի «Յիշատակարան»-ները ինչպէս նաեւ անոր «Պատասխանի Լատինաց թխտան», էջ 201-ով կը տրուին Մկրտիչ Նաղաշի կենսագրութիւնը 1449-ին գրուած Աստուածատուր վարդապետէ (Հ. Ղ. Ալիշան այ հրատարակած է այս Յայսմաւուրքի յիշատակարանը «Հայագաւաւում»-ի մէջ): Ասկէ վերջ, էջ 215, հրատարակուած տաղերուն իւրաքանչիւրին մասին ծանօթագրութիւններ: Թէեւ անտիպ տաղ մը չենք գտներ հրատարակուած 15 տաղերուն մէջ, եւ սակայն կան որ հրատարակուած են ուրիշ անուններով եւ կամ թէ այժմ այլեւս անդատնելի են. որով ներկայ հրատարակութիւնը մեծապէս զնաւատելի կը գտնեմ եւ արժէքաւոր՝ մեզի ամփոփ կերպով Մկրտիչ Նաղաշի կեանքն ու գործը տալուն համար:

Հատուկ կ'աւարտի Նաղաշի տաղերը պարունակող ձեռագիրներու յիշատակութեամբ, ինչպէս նաեւ անո՛ց մէջ գտնուող Նաղաշի տաղերուն, ցանկերով: Նկատել առնուած են միայն Յրեւանի Մատենադարանի զբաղիւնները: Բ. Լ. Զուգադեան

տուած է Մկրտիչ Նաղաշէ գործածուած օտար բառերու բառարանը:

Այս հատորին մէջ Մկրտիչ Նաղաշ նկատի չէ առնուած իբր մանրանկարէջ:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ: Աշխատօրեց Վազգէճ Յակոբեան: Մեծ ուքածով, լաքակազմ, էջ 742: Ա. Խատը, Երևան, 1964:

Բազմաշխատ եւ մեծարժէք գործ մըն է որ մեղի կը տրուի այս հատորով: Կատարած զիտական կերպով, ձեռագրական համեմատութեամբ, ինքնին ապերախ եւ ծանրաշատ, գործը խիստապէս անփոխարինելի աշխատութիւն մըն է, որուն կարիքը՝ բնագիրներու խղճամբիտ եւ լուրջ հրատարակութեամբ, երկար տարիներ խիստ զգալի էր: Երախտապարտ ենք Վազգէճ Յակոբեանին եւ իր գործին կարող գիտնական խմբագիր՝ Երոն Եւստեանին, եւ Պիլավեանին: Արժանաւոր կոթող մըն է Յակոբ Մանանդեանի յաւերժակա յիշատակին:

Նախաբանը որ կը գրաւէ գործին սկիզբի է. էջէն մինչեւ էջ 79, լուրջ եւ գնահատելի աշխատութիւն մըն է, արժանի՝ ուշի ուշով կարդացուելու, Յաւալի է որ Հայոց Կանոնագրքին պէս մեծարժէք գործի մը մէջ նախաբանին հեղինակը հարկ տեսեր է անհոռի օտար բառեր գործածել, ինչպէս «կողիֆիկացիա», «ինկուրդուրացիա», «մոմենտ», «սոցիալական», «պլանում», «տերիտորիա», եւ այլն (ասոնք երկու էջի մէջ միայն...), երբ արգէնն որոշ է որ կրնար իր հայերէնը տալի անաղարտ պահել վերիններուն նմա՝ չարափոխութիւններէ:

Յակոբեան իր Նախաբանին Թ.-ԺԱ. էջերը նուիրած է շատ կարեւոր Շահապիվանի ժողովին կանոններուն: Ասիկա էր մեր իրական պատմութեան մէջ առաջին ժողովը, ուր յանցագործներուն պատիժներ եւ տուգանքներ սահմանուեցան եւ ուր կրօնական յանցագործներէ գառ աշխարհական («սգաս», «խնական») յանցագործներու

պատժուի են ալ տրուեցաւ եկեղեցական իշխանութեան: Վասակ Սիւնիի օրով կատարւած այս ժողովը, եւ Հաւանաբար անկէ ալ թելադրուած, ինչպէս ալլուր ըսած եմ, կատարուեցաւ եկեղեցական տարազին տակ՝ ազգային աշխարհական իրաւասութիւն ըստեղծելու համար, ընդդէմ անկալուած Պարսիկ ոտնձգութեանց:

Յակոբեան՝ «Կանոնադիրք Հայոց»ը հրատարակած է Երեւանի Մատենադարանին՝ 48 գրչագիրներուն, ինչպէս նաեւ 1098 թուին գրուած Նոր Զուղայի վանքին մատենադարանի թիւ 131 ձեռագրին լուսանկարչական պատճենին համեմատութեամբ: Ան երկու խումբերու բաժանած է գրչագիրները զորս օգտագործած է: Ա. խումբին կը պատկանին 29, իսկ Բ. խումբին՝ 18, իսկ հատ մըն ալ, թիւ 778, կը պատկանի ու մէկ խումբի. Ան մեղի կու տայ իւրաքանչիւր խումբի առանձնայատկութիւնը, կը նկարագրէ գրչագիրները, կը խօսի գրչագիրներու մասին՝ որոնք կը պարունակեն առանձին կանոնախումբեր: Նկատի ունեցած է Մատենադարանին 200ի մօտ կանոնադրական ձեռագրները եւ սակայն խղճամիտ ուշադրութեամբ միայն յիշեալ 48 գրչագիրները օգտագործած է: Կը վկայէ որ 1 ձեռագիր 11-րդ դարէն է, 1 ձեռագիր 13-րդ դարէն, 3 ձեռագիր 14-15-րդ դարէն, 3՞ ձեռագիր 17-րդ դարէն, 5 ձեռագիր 18-րդ եւ 2 հատ ալ 19-րդ դարէն: Արդարեւ զարմանալի է որ շատ հաղուադիւտ են 17-րդ դարէն՝ առաջ գրուած կանոնադիրքեր: Իմ հաւաքածոյիս մէջ ունիմ չորս կանոնագիրք, որոնցմէ մին անյիշատակաբան, 15-16-րդ դարուն կ'երեւայ. միւսները 17-րդ դարէն են: Ծահկան է նաեւ որ Յակոբեանի նկատի ունեցած 48 գրչագիրներուն միայն 24-ը ունին գրչութեան վայր եւ առոնցմէ ալ միայն 3-ը բուն Հայաստանի մէջ ընդօրինակուած են:

Յակոբեան իր աշխատութիւնը կատարած է յունարէնի համեմատութեամբ, որով իր ճշգրտները եւ դիտողութիւնները կշիռ եւ արժէք ունին:

Յակոբեանի մեծարժէք «Նախաբան»ը կ'աւարտի էջ ԾԼ-ի վրայ: Ասոր կը յաջորդէ «Օգտագործուած Ձեռագրերի նկարագրութիւնը», ուր իւրաքանչիւր գրչագիր խղճամտօրէն կը ներկայացուի: Կը տրուին գրչագրին նկարագրութիւնը, յիշատակաբանը, էջ ՀԱ-ի վրայ յիշատակաբանի «Յակոբ վարդապետ Ղրիմեցի աշակերտ Գրիգոր վարդապետի եւ քաջ դատապետի Եղնկացոյ» պէտք է ըլլայ «ԳէՈՐԳ վարդապետ» եւալին:

Էջ 3-ով կը սկսի «Կանոնադիրք Հայոց»ի բնագիրը: Նախ «Շարադրութիւն Կանոնաց Եղեալ Եւ Այս Կարգ Եւ Զափ Գլխոցն», որմէ վերջ «Ճաշիկ Միտեմտութեամբ Կանոնացն» եւ վերջապէս կանոնները շարք առ շարք, խիստ մանրամասն համեմատութեամբ նշանակուած լուսանկար տակ: Էջ 54-ով կը սկսի գործին ամենայդնեցոյցիչ աշխատանքի մասը, որ նուիրմամբ կատարած է Յակոբեան, որուն համար քական է իրեն նորոգապարտ ենք:

Էջ 627-ով կը խօսուի Շահապիվանի Ժողովի Կանոնախումբին մասին եւ կը տրուի նախադրութիւնը: Տարակոյտ չկայ որ նախադրութեան երկրորդ եւ երրորդ խմբադրութիւններ Ժողովին ժամանակ լինէ եղած եւ շատ ահւրի ուշ ժամանակի խմբադրութիւններ են, որոնց մէջ կը յիշուի «Սրբոյժ Վարդանայ» (Մամիկոնեան) մասին, բան մը որ միայն անոր Աւարայրի վրայ Նահապետուիլէն շատ վերջը կ'ընաք կոչուիլ: Եւ կամուտ է նաեւ եւ ուշ խմբադրութիւն առաջին նախադրութեան այն մասը որ կը սկսի «Նախաբար ամենայն առաջի Վասակայ ... միջեւ ... միաբան բարբառէին այսպէս»: Այս խմբադրութիւնն ալ բացէ ի բաց կը յայտնէ իր ուշ ժամանակի ըլլալը «Ղեւոնտի սրբոյժ» յիշատակութեամբ «Շահապիվանի Ժողովին Կանոնները»ն նախադրութիւնը քննութեան ենթարկուելիք հարց մըն էր: Յակոբեան հաւանաբար իր հետապնդած նպատակէն դուրս նկատելով լոկ յիշատակութեամբ դժնայած է:

Յակոբեան յաւելուածին մէջ կը խօսի

«Կանոնագրի Հնազանդութիւնը Բնկորմերու մասին, որոնք Մատենադարանի երկու գրչան գիրներէն Հանուած չորս պատուիրակներ (պահպանակներ) եւ:

Վերջապէս կը տրուին ցանկեր: Նախ կանոնադրերու յօդուածներուն սկզբնատողերը այրենական շարքով, յետոյ առարկայական ցանկը, յատուկ անուններու եւ տեղերու ցանկ, ինչպէս նաեւ էջ մը սրբապօղոսած վրիպակներ:

Շատ կարեւոր հասարակ մըն է, որ գոհունակութեամբ կը փակենք: Հասարակ մը՝ Հատուկ պարտման համար ամէն տեսակ իւրերով:

Կրկին յայտնելով մեր շնորհակալութիւնը Վազգէն Յակոբեանին՝ իր այս խոշոր մատակարար համար, իրեն կը մղվենք յարատեւութիւն, կամք ու կորով՝ յաւրդ հատորի՝ կամ հատորներուն ամբողջացման համար:

ՍՈՒՆԱՅ ԱԶԳԱՐՈՒԹԻՒՆԸ: Գրեց Վարդան Պետրոսեան: Կիտալաք, ուրաքա՛, էջ 550, պատկերազարդ, Երեւան, 1965:

Մեզը որ Պետրոսեանի այնքան սրահատնում նուիրմամբ պատրաստած այս գործը (Հրատարակուած միայն 750 տպագրականով) կը Հրատարակուի վատորակ թղթով, վատորակ տպագրութեամբ, նկարներու վատորակ արտահանութեամբ: Աւելի ճիշդ՝ այս գործը գրաւորեցնալով գրուած տեսակ մը արտահանութիւն է: Երեւանի Պետական Պատմական Թանգարանի վատորակը գիտական աշխատողին այս հետաքրքրական եւ արժէքաւոր աշխատութիւնը լոյս հանուած է իբր թէ երեսէ ինկած որբի մը նման, գուրկ նախական խնամքէ՝ որուն արժանացած կը գտնենք բազմաթիւ անար-

ժան Հրատարակութիւններ Երեսանեան տըպարաններէն: Հատ երեւոյթին անտեսուած այս Հրատարակութիւնը սակայն շատ արժէքաւոր կը գտնուի եւ Հայ աղագրութիւնը, արհեստներու ծանօթութիւնը մեծապէս երախտապարտ է ու պիտի մնայ Վարդան Պետրոսեանի անխնայ աշխատանքին եւ մեզի տրամադրած այս արժէքաւոր գործին համար:

Հատորին Ա. մասը կու տայ ընդհանուր տեղեկութիւններ Սասունի մասին, ուր կը յիշուին Սասոյ դաւաղանքները, գիւղերը՝ կու տայ տեղագրական արժէքաւոր ծանօթութիւններ բերդերու, կամուրջներու, պատմական վայրերու, վանքերու: Յետագայ հատուածը (էջ 37) նուիրուած է 1915-ի դէպքերուն եւ ցեղասպանութենէ. փրկուածներուն: Թայլին եւ Աշտարակ հաստատման: Բուն ազգագրական մասը կը սկսի էջ 71-ով՝ դաշտամշակութիւն, աղագրութիւն եւ բանջարաբուծութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն, թռչնաբուծութիւն, շերամապահութիւն, մեղուաբուծութիւն, որոտընութիւն եւ ձկնորսութիւն, տնայնագործութիւն: ամէն տեսակ արհեստներ, առեւտուր, տարազ, ուտելիք: Մասնաւոր հատուածներով կը ներկայացուին ընտանեկան վարք ու բարք, ամուսնութիւն (հարսանեկան եւ այլ երգեր), տղաբերք, Հիւանդութիւն (բժշկութիւն), մահ եւ թաղում, հասարակային դասակարգ, իրաւունք, Հաստատութիւն, Ժողովրդական հանձնարարներ, առանձին, պատմուածքներ, կը նկարագրէ 41 խաղեր: էջ 437-ով կը սկսի Սասնոյ բարբառին բառարանը, որով կ'աւարտի հատորը:

Ճաւարի է որ այս շահեկան հատորը, որուն մէջ թէն է կան մասեր որոնք կարելի էր գեղջիկ, իրական տպագրութեամբ չէ որ լոյս կը տեսնէ:

Գ. ՔԻՒՐՏԵԱՆ,

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԺԱՌԱՆԳԱԴՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԺԱՅԱՐԱՆԻ

1965-1966 ՏԱՐԵՐԶԱՆԻ

Ամենապատիւ Սրբազան Հայր,
Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր,
Ճարգելի Լանդիսականներ.

Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի
1965-1966 դպրոցական տարեշրջանի աւարտին, ամ-
բողջ տարւան աշխատանքները պատկազ այս պա-
նուխ, սեզմ գիտերով կը ներկայացնենք ամփոփ
պատկերը ուսումնական տարւան աշխատանքին և
գործունէութեան:

1965-66 դպրոցական տարեշրջանի բացաւը տեղի
ունեցաւ 1965 Սեպտեմբեր 23-ին՝ ճախագահու-
թեամբ Ամենապատիւ Գառիբաբ Սրբազան Հօր:

Վարժարանիս եօթնամեայ ուսման ծրագրէն այս
տարեշրջանին ունեցանք վեց դասարաններ՝ ժիշկա-
կարգ ուսմանց ջառմանայ լրջանի բոլոր դասարան-
ները, Ա.-Դ. կարգերով, իսկ Ընծայարանի եռամեայ
լրջանէն միայն երկու դասարաններ: Մեր ուսանա-
ղութեան թիւը եղաւ 33: Միջնակարգ ուսմանց բաժ-
նին մէջ ունեցանք 27 ժառանգաւորներ:

Ա. Դասարան — 7 խողի

Բ. Դասարան — 7 խողի

Գ. Դասարան — 6 խողի

Դ. Դասարան — 7 խողի

Ընծայարանի բաժնին մէջ ունեցանք 6 աշ-
կերաներ:

Ընծայարան Ա. — 4 խողի

Ընծայարան Գ. — 2 խողի

Ներկայ տարեշրջանի Ժառանգաւորաց Վարժա-
րանի և Ընծայարանի կրթական-ուսումնական գործը
յառաջ տարուեցաւ շունչեղբոր ուսուցչական կողմի
մը, որ իր մէջ կը նախըւրէ 7 եկեղեցական և 10 աշ-
խարհական կրթական մշակներ, որոնքմէ ոմանք
մայրուէն էին, և ոմանք՝ այցելու:

Ստորեւ կը ներկայացնենք մեր յարգելի ուսու-
ցիչները, իրենց ասանդան Նիթերով:

ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐԿ Ս. ՀԱՅՐ. — Պատմ. Ընդհ. Ե-
կեղեցւոյ և Գրադպիտութեան (Ընծ. Գ. և Ա.)
ԳԵՐԵՇ. Տ. ՆՈՐԱՅՐ ԵՍՍ. ՊՈԼԱՐԵԱՆ. — Աստուա-
ծարանութիւն և Միազգիտութիւն (Ընծ. Գ. և Ա.):

ԳԵՐԵՇ. Տ. ԵԱԼԷ ԵՍՍ. ԱճԻՄԵԱՆ. — Բնագանցութիւն
և Տրամաբանութիւն (Ընծ. Գ.):

ՀՈԳԵՇ. Տ. ՆԵՐՍԵՆԷ ՎՐԴ. ԲԱՊՈՒՅԵԱՆ. — Ներա-
ծութիւն Հին և Նոր Կտակարանի (Ընծ. Գ. և Ա.)
Կրօնից Պատմ. (Ընծ. Ա.):

ՀՈԳԵՇ. Տ. ՎԱՋԷ ՎՐԴ. ԻԳՆԱՏՈՍԵԱՆ. — Գործք Ա-
ռաքելոց (Ժոնգ. Գ.) Գրաբար (Ժոնգ. Գ. Ա.):

ՀՈԳԵՇ. Տ. ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ԵԱՄԻԵԱՆ. — Պատմ. Հայ
Եկեղեցւոյ (Ընծ. Գ. և Ա.) Կրօն (Ժոնգ. Բ. և Ա.):

ՀՈԳԵՇ. Տ. ՏԱՅԵՆԻ ՎՐԴ. ՂԱՐԻՊԵԱՆ. — Քրիստոնէա-
կան (Ժոնգ. Գ.) Պատմ. Հայոց (Ժոնգ. Բ. և Ա.):

ՀՈԳԵՇ. Տ. ԱՐՇԵՆ ԱՐՂ. ԱՅՎԱՋԵԱՆ. — Գեղազրու-
թիւն (Ժոնգ. Գ.-Ա.) Ամզիքեւն (Ժոնգ. Բ. և Ա.):

ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՊՈՒՅԻԳՆԵԱՆ. — Գաստիարակ-ու-
սոցիչ: Պատմ. Խառնատիրութեան, Հոգեբանու-
թիւն և Ընկերաբանութիւն (Ընծ. Գ. և Ա.) Բա-
րոյագիտութիւն և Մանկավարժութիւն (Ընծ. Գ.)
Բ. Կիսամական Գիտութիւն (Ժոնգ. Գ. և Ա.):

ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ԼԷՓԷՅԵԱՆ. — Հայեանք (Ժոնգ. Գ.-
Ա.) Թուարանութիւն (Ժոնգ. Բ.):

ՏԻԱՐ ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅԵԱՆ. — Եկեղեցական Երաժըշ-
տութիւն (Ընծ. Գ. և Ա. Ժոնգ. Գ.-Ա.) Ուսողու-
թիւն (Ժոնգ. Գ. և Ա.):

ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՄԵՍՏԱԿԱՆԵԱՆ. — Պատմ. Ընդհ. Ազ-
գաց (Ընծ. Ա. և Ա. Ժոնգ. Գ.) Տոմարակալութիւն
(Ընծ. Ա.) Ամզիքեւն (Ժոնգ. Գ.):

ՏԻԱՐ ՍՈՒԼԷՍԻԱՆ ՄԱՍՍԻՍ. — Արաբերէն (Ժառ-
Գ.-Ա.):

ՏԻԱՐ ՎԱՋԷ ԳԱԼԱՅԵԱՆ. — Երազական Երաժըշ-
տութիւն (Ընծ. Գ. և Ա. Ժոնգ. Գ.-Ա.) Աշխար-
հագրութիւն (Ժոնգ. Գ. և Ա.) Գիտութիւն
(Ժոնգ. Բ. և Ա.) Թուարանութիւն (Ժոնգ. Ա.):

ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐԵԱՆ. — Պատմ. Ընդհ. Ազգաց
(Ընծ. Գ.) Ամզիքեւն (Ընծ. Գ. և Ա.):

ՏԻԱՐ ՔԱԼԱՅ ԳԱԼԱՅԵԱՆ. — Ամզիքեւն (Ժոնգ. Գ.)
Ա. Կիսամական Գիտութիւն (Ժառ. Գ. և Ա.) և
Հայ Գրականութիւն (Ընծ. Գ. և Ա.):

ՏԻԱՐ ՄԱՆՈՒԷԼ ՔԵՕՄԷՆԱՆ. — Հայ Մատենադրու-
թիւն և Գրաբար (Ընծ. Գ. և Ա.) Միջնադարեան
Հայ Բանաստեղծութիւն (Ընծ. Գ.) Պատմութիւն
Հայոց (Ժոնգ. Գ. և Ա.) Բ. Կիսամական Հայ
Գրականութիւն (Ընծ. Գ. և Ա.):

ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՄԵՆԷՇԵԱՆ. — Մարգաթ (Ժոնգ. Գ.-
Ա.):

Մեզի անժխկան օգնականներ ունեցանք Հոգւ. Տ. Տաթև Վրդ. Դարբանեան եւ Գրե. Յակոբ Գունդ-դանեան. առաջինը իբրեւ Փոխ-Տեսուչ, իսկ երկ-րորդը՝ իբրեւ ընդհանուր հսկող, զատարակու-սուցիչ, որոնք ստանձնեցին Վարժարանէս ներս հըս-կողութեան գործը:

Օրական եօթ պահերու դրութեան վրայ կանո-նաւոր ընթացքով կատարուեցան դաստանդութիւն-ները: Միջնակարգ դասարաններու մէջ աւանդուե-ցան կրօնական, գիտական, պատմական եւ լեզուա-կան դասեր: Իսկ Ընծայարանի բաժնին մէջ Ս. Գրա-կան, աստուածաբանական, հայագիտական, եկեղե-ցապատմական ու փիլիսոփայական նիւթեր: Փորձա-

աութիւնը ջոյց տուաւ թէ ժառանգաւորաց Վարժա-րանի մէջ աւելի զօրացնելու է լեզուական դասերը, որպէսզի Ընծայարանի մէջ աշակերտներ կարենան զասերու կողքին անձնական փոքր աշխատանքներ կատարել, վարժուելու համար գիտական եւ քննա-սիրական աշխատանքին:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի կրթական եւ ժառանգական աշխատանքները ընթացին միայն դասապահերու սանձմաններուն մէջ, այլ տա-րածուեցան նաեւ դասախօսական երկկողմնեան մէջ: Այս տարի ընթացինք ուժ տալ գրական-գեղար-եստական երկկողմնեան: Տարւոյի ընթացքին, ա-ռաւելաբար սւտանդաց նախաձեռնութեամբ, կող-



Ընծայարանի շրջանաւարտ Յարընժամերը, իրենց սեռնադիրջ
Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հօր հետ:

մանրագրուեցան գրական-գեղարուեստական գանդազան երկիրները, որոնք ընթացքին ևս առանգորեն առիթ ունեցան արտայայտել իրենց մասնաբան և գեղարուեստական շնորհները:

Ստորև կը ներկայացնենք անոնց ցանկը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ գերը մեր ժողովուրդի կենսին մէջ: Ս. Էջմիածնի միաբաններէն՝ Գեղը: Տ. Վահան Եպո. Տէրեան:

Երեկոյ՝ նուիրում թարգմանիչ վարդապետներու, կազմակերպում Ընծայարանի կողմէ:

Թիշատակի երեկոյ՝ նուիրում Վ. Թէքեանի մահուն բանամեակին: Բանաստեղծին Գրն. Պետրոս Լէփէնեան և Գրն. Արայ Գալսեան: Առաջինը ներկայացուց Թէքեանի անն ու գործունէութիւնը, իսկ երկրորդը՝ անոր շնորհակալ արուեստը:

Ընծաութ լեզուն պեղումները: Դասախոսութիւն՝ արուած Գրն. Մ. Քէտեանի կողմէ:

Երեկոյ՝ նուիրում Ս. Յակոբ Մերեայ Հայրուպետին:

Թիշատակի երեկոյ՝ նուիրում Ալբրիխտ Կառտաներէն Բլիստայնի, կազմակերպում Ընծայարան Ա. Կարգի կողմէ:

Թիշատակի երեկոյ՝ նուիրում Մ. Մեմարեցի ծննդեան 80-ամեակին, կազմակերպում Ժառանգաւորաց Դ. Դասարանի կողմէ:

Հայկական մանրակարգութիւնը և Թորոնթոնի: Դասախոսութիւն՝ արուած Հոգի. Տ. Վալէ Վրդ. Իգնատիանի կողմէ:

Իսկ 6 Մարտ 1966-ին, ձեմարանի որակին մէջ ունեցան շրջապատին շնորհակալութիւն՝ Աստուծայունի շնորհին առաջին տպագրութեան 300-ամեակին առիթով, նախագահութեամբ Ամեն. Գառնիար Սրբազան Հօր:

Իսկ անոնցմէ զատ ունեցանք երթաւորական երեկոներ, արտասանութեան և գծագրութեան մրցուեցան:

Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք այն բոլոր ուսուցիչներուն, որոնք իրենց սիրամոտ մասնակցութիւնը բերին մեր գրական-գեղարուեստական երեկոյներուն:

Այս տարի, շնորհի Կիւլլէնիկեան Հիմնադրութեան նուիրատուութեան, կարողացան կաւարել Լարանի, ուր տեղի կ'ունենան գրական-գեղարուեստական մեր երեկոյները: Այս առթիւ Հիմնադրութեան և անոր աշխուսիտ անդամներուն կը յայտնենք մեր և ուսանողութեան շնորհակալութիւնները:

Ընդերային և կարգապահական գծան լրաց ժառանգաւորաց Վարձարանի և Ընծայարանի կեանքը ընդհանուր առմամբ անցաւ անաղարտ և խաղաղ ու մեր ընդհանուր կարգապահութիւնը խանգարող նախադէպի դէպքեր չունեցանք բարեխառնարար: Ձեռքացին մեր ասանուն մէջ կարգապահութեան և օրէնքի դիտարկութիւնը արթնցին: Ուսանողները շատերս են ինքնագործակցութեան և ամերիկայի ուղով եղարարական գործակցութեան, իրենց միջոցն ու ուղարկութիւնը ուղղելով ուսանողական աշխատանքերու և պարտականութեան:

Ամէն տարթ ունեցանք Տեալական ժողովներ:

Իսկ անկէ զատ գրեթէ ամէն ամիս կանոնաւորաբար ունեցանք ուսուցչական ժողովներ, ուր քննուեցան ուսանողներու ուսումնական, կրթական և բարոյական վիճակը, անոնց յաջողութիւններն ու մարդկութիւնները:

Ունեցանք բարոյախօսութեան մասնաւոր ժամեր, ամէն Ուրբաթ երեկոյ: Ուսանողները ունեղորեցին բարոյախօսութիւններ, արուած Հոգի. Հայրերու և ուսուցիչներու կողմէ:

Ուսանողներ բերին եկեղեցւոյ ժամերգութեան, և արարողութեանց իրենց կանոնաւոր մասնակցութիւնը: Ամէն Ուրբաթ, Ետրաթ և Կիրակի մասնակցեցան Ս. Յարութեան Տանարի մէջ կատարուող Թափօրներու և այլ անդրաւորութեանց: Ուրբաթ ենք որ քիչ Թուրքիաներով, ուսանողներ հասնողով ու Հաղուր ընծայումով մասնակցած են եկեղեցական արարողութեանց:

Այս տարի ուս. տարին նաև Ժառանգաւորացն ենք մարդական կենսին: Մարգարէ՝ ուսուցիչ Գրն. Մէնէլիանի առաջնորդութեամբ ուսանողներ ամէն երկուշաբթի, Երեքշաբթի և Հինգշաբթի օրեր երեկոյն ժամերգութեան յետոյ կ'աւարտեցին վարձեր, կազմակերպեցին Փութալի, պատէթալի, վոլիպոլի մրցումներ: Տեղի ունեցան նաև միջպարտական մրցումներ:

Այս տարի միջնակարգ ուսմանց բաժնին ունեցեալ իշխանաւորներ, որոնք յառաջիկայ տարի Ընծայարանի բաժնին մէջ պիտի շարունակեն իրենց ուսումը:

Ընծայարանի բաժնին ունեցանք երկու շրջաւորաւորներ՝ Խաչիկ Սրբ. Երեցեան և Յարութիւն Սրբ. Թովմայեան, որոնք Մայիսի 20-ին Ամեն. Գառնիար Սրբազան Հօր ձեռնով արժանացան կուսակցին քանակաւորութեան Ս. Կարգին, վերակոչուելով Տ. Գառնիւն և Տ. Զարեհ արեղաներ. երկուսն ալ իրենց Հուգուր պատրաստութեան շրջանը աւարտեցին և նուիրում են արդէն իսկ Ս. Աթոռայ ծառայութեան գործին:

Իսկ Մայիս 28-ին, Ընծայարանի Ա. Կարգի յուր ուրարակներէ՝ Տրց. Նիկա Գալիզեան, Տրց. Յարութիւն Միսեան, Տրց. Մանուէլ Մարգարէլեան և Տրց. Յովհաննէ Դարեկեան ձեռնադրուեցան արկաւար, ձեռնարկ Ամեն. Գառնիար Ս. Հօր:

Ասա ժառանգաւորաց Վարձարանի և Ընծայարանի կեանքը և գործը այս տարեշրջանին:

Մեր տեղեկաբերը վերջացնելէ առաջ կ'ուղէինք մեր արտագին շնորհակալութիւնները յայտնել Ամեն. Գառնիար Սրբազան Հօր, որուն կենդանի հետաքրքրութիւնը, հոգածութիւնն ու հայրախնամ Հովհաննէ մեր, մեր ուսուցչական կազմին և ուսանողութեան համար անդիմապաւ գործունէութեան մղել ուս, ջաշխարհի իթան և սպանովութեան տոկուն յենարան:

ՆԵՐՍԵՆ ԳՐԻ. ԲԱՊՈՒՃԵԱՆ
Տեալ ժառանգաւորաց Վարձարանի և Ընծայարանի

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՋԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1965 — 1966 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

Ամեն. Տ. Եղիշէ Ս. Աբգեղաւ Տէրտէրեան
Բարեխնամ Պատրիարք Ս. Աթոռոյ,
Հոգեշնորհ Հայրեր, և
Բարգեժ հանգիստեալներ.

Անխատանքով ու հիգիենայական անտարբեր
մը հաճոյքովն է որ կանգ կ'առնենք այստեղ,
ձեզի բերեալու 1965-66 դպրոցական տարեշրջանի
այխատանքին հաշուեկշիռը:

Տարւոյս ընթացքին մեր աշակերտութեան
թիւը կը հասնէր 300ի, բաժնուած հետեւեալ
ձևով. —

Իրկորոգական կարգեր	102 աշակերտ
Նախնայթմարանի բաժին	128 աշակերտ
Մանկապարտեզի բաժին	70 աշակերտ

Մեր կրթական ծրագրի իրականացման մէջ մեզի օժանդակ ունեցանք ՂԴ անձերէ բաղկացեալ Առաջնայական կազմը: Անոնք երանազգիքի նուիրումով բերին իրենց լաւագոյն ծառայութիւնը: Գաղական պէս յիշատակութեան արժանի էր նկատենք մեր առաջնական կազմի 6 եկեղեցական շայրերը, որոնք անվաճ նուիրումով գործակցեցան մեր կրթական աշխատանքին: Այս առիթով եւրօրին կը յայտնենք մեր նախնայականութիւնները:

Մեր կրթական ծրագիրը բնթացաւ ըստ նախընթացի, Մանկապարտէզ (2 դասարան), Նախակրթարան (6 դասարան), և Երկրորդական (6 դասարան) երեք գլխաւոր բաժիններով:

Մեր ամբողջական հսկողութեան տակ առ-
թերի իրագործուեցան բոլոր հիւղերու դա-
սաւանդութիւնները:

Վարժաբանի՞ն կը թաղան ձրագործը, ըստ
դասաւանդուած ճիշդեաց, թանցաւ քարձեալ
հետեւաւ, քաժի՛ննեքո՛ւ։

Լեզուակա՞ն. → Հայերէն (Գրաբար եւ Աշխարհաբար):

በጊዜያዊነት (ፈጣንነት እና የጥናታዊነት/ፈጣንነት)፣

Արաբերէն (Լեզու, Լեխարհագրութիւն, և
Պատմութիւն):

Հայագրտական դասեր. — Կրօնագրիտու-
թիւնն և Հայ եկեղեցւոյ՝ Պատմութիւն, Հայոց
Պատմութիւն, Պատմ. Հայ Մատենագրութեան,
Հայ Արձեւեստից Պատմութիւն:

Գիտական. — Բնագիտություն, Քիմիաբանություն, Մաթեմատիկա (Երկրաչափություն, Գրականչիւ, Թուաքանություն), Աշխարհագրություն:

[illegible]

Մայիս 23 - 31 տեղի ունեցան վարժարանի
Ամալիերի Գնահ.թււնները: Այս քննութիւն-
ներէն յետոյ, տարւոյն ընթացքին ուսմանը
մէջ ձայնագոյծ Գ աշակերտները, կը դրոշմու-
նէրենց դասարանները, Դասցեալները կը շա-
ռուանկեն իրենց ուսումնական ընթացքը յա-
յոցութեամբ:

Մանկապարտէշէն՝ Վկայաւելով Նախագլխաւոր-
թառան կ'անցնին 20) փոքրիկներ:

Իւկ Վարդարանիս աւարտական լիայակա-
նին կ'արժանանան մերկորդպանին Ե. դասա-
րանին 14 նախկերտները, որոնք պիտի մաս-
նակցին առաջ Անդրկական ձ. Ս. Ի. (ձնեբերը)
Սերդիֆիբեյդ օֆ Էստոնիայի) քննութեանը,
որոնց արդիւնքը կը հապորդուի լառաջիկայ
Յունացարանոս

Ուրախ ենք յայտնելու որ տարւոյս շըր-
շանաւարտ աշակերտներին տառար իրենց
մանց ընթացքը պիտի շարունակեն հասեւելով
համալսարանական բարձրագոյն կրթութիւնն:
Անոնց հինգը յաջողութեամբ մասնակցեցան
Վէյքոմբի համալսարանի զինութեան եւ ըն-
դունուեցան համալսարան: Այս 'հիշդէն Յազար
Իւրեհեանը զինութեանց խիբ եղած է զազա-
լիս' բարձրագոյնը:

Իսկ անցեալ տարւոյ մեր շրջանաւարտները մասնակցած քլլաւով ձ. Ս. Ի. Բ. (անցեալ տարւոյ) քննաթեանց, լաջողած են հետեւեալ ճիւղերէս մէջ հաւանցած ձ. Ս. Ի. Բ. համալսարանի վկայականաց: —

Այտա Մարգարեանն. — Հայերէն (Աշխարհ.),
Աբաբերէն, Անգլիական Գրականութիւն, Ընդ-
հանուր Ազգայն Պատմ., Մանկավարժութիւն:

Անահիտ Սթամբուլյան. — Հայերեն (Աշխարհ.), Արարերեն, Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն:

Արաքսի Խաչատուրյան. — Հայերեն (Աշխարհաբար):

Արշալույս Տէմիրճեան. — Դասական Հայերեն, Արարերեն, Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն:

Զապէլ Խաչատուրյան. — Հայերեն (Աշխարհ.), Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն:

Լուսին Պատմական. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն:

Պօղոս Անտոնեան. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական Գրականություն:

Պօղոս Կարյանեան. — Արարերեն, Անգլիական Գրականություն:

Անցեալ տարւոյ մեր այս շրջանաւարտներն հինգը յաջողութեամբ կը շարունակեն իրենց համալսարանական ընթացքը Պէյրուսի մէջ:

Ըրինք մեր կարելի՜ն՝ աշակերտները օժտուալ ու միայն ազգային և իմացական առողջ դաստիարակութեամբ, այլև հոգ տարինք տնայնիկ հոգեւոր և բարոյական դաստիարակութեան: Ինչպէս անցեալ տարիներուն, այս տարի ևս այս գետնի վրայ շունեցանք օրհն



Մերոց Քարգանկաց երկրորդական Վարժարանի Ուսուցչական կազմը եւ 1966 տարւոյ Շրջանաւարտները:

Յամիկ Պաղամեան. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական Գրականություն:

Սոսի Ստեփանեան. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական Գրականություն:

Արսէն Քէրէճեանեան. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական (Լեզու). Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն, Մանկավարժութեան Գրականություն (Ֆիլոլոգ):

Նուշար Եագուպեան. — Դասական Հայերեն, Արարերեն, Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն, Մանկավարժութեան Գրականություն:

Նայիրի Լէվէնեան. — Հայերեն (Աշխարհաբար), Անգլիական Գրականություն, Բնագ. Ազգայն. Պատմություն, Մանկավարժութեան Գրականություն:

աշքի դարձող անկարգություն, և մեր աշակերտութեան ընդհանուր վարքի ու բարքը եղաւ լաւագոյնը:

Շարունակեցինք զիրենք Եկեղեցի առաջնորդել ամէն կիրակի, ու տարին քանից մասնակից դարձնել Հաղորդութեան Սուրբ Խորհուրդին:

Մեր դասերէն դուրս կաղմակերպեցինք նաև դասախոսական համալոյքներ, հրատարակուող մասնաւորաբար արտասահմանէն ու խառնարարաբար Սուրբ Քաղաքի դաստիարակող մասնաւորականներ, ազգային գործիչներ, եկեղեցականներ և այլն:

Մեզի համար յատկապէս յիշատակելի պի-

ախ մեան, Հայրենիքէն եկած դատախազները, ինչպէս Նրեանի Առաջնորդ Գերշ. Տ. Վահան եղաւ, Հայաստանի Մատենադարանին Տնօրէն Գր. Լեւոն Խաչիկեանն է իր օգնականը՝ Գր. Սե. Նեքերիմ Արեշատեանը։ Օգտուելով Գրք. Խաչիկեանի և Արեշատեանի ներկայութենէն, կազմակերպեցինք նաև համաժողովրդային դատախազական երեկոյթ մը, ի ներկայութեան խառն բաղմունքեան մը, ուր Գրք. Խաչիկեան և Արեշատեան ներկայացուցին Հայ ձեռագրապան մշակոյթն ու Երեւանի Ս. Մեսրոպ Մաշտոց Մատենադարանի դերը։ Անոնք կրցան խանդառել ներկայ հասարակութեան նոգիները Հայրենիքին առջևիով։

Յիշատակելի պարգապ մը եղաւ նաև Երուսաղէմի ռատիօլոյայանի վարչութեան կողմէ բացուած ԲՈՒԻԿ աւարը՝ ձեռնարկը, տեսակ և իմացական մրցանք, որուն մասնակցեցան Երուսաղէմի դպրոցներէ։ Այս կերպով ներքէն ծայնափուլի վրայ անպարտաւոր ղեկավարէ զպատասխանելին իրենց ուղղուած գիտական, արուեստի, պատմական և այլ տեսակի հարցումներու։ Մեր աշակերտները այս մրցանք մէջ բերին բարձրագոյն նիշը և առաջին անգիտացան։

Մեր ուսանողներու Ֆիլիքեան դատախազական համար ունիւք մեր մարզախմբիկները, աշխիկները՝ առաջնորդները մարզիչ Օր. Շուշան Յովսէփեանի, իսկ տղաք՝ մարզիչ Գր. Միսաք Յակոբեանի։

Աշակերտները իրենց առօրեայ մարզական փորձերուն հետ ունեցան նաև վճիռալի և պատշէթալի մրցումներ քաղաքիս այլ երկրորդական վարժարաններու խումբերուն հետ, և քանիցս պատուաբեր յաղթանակներ ապահովեցին։ Այս տարի տար խումբերու հետ ունեցած ենք պատշէթալի, վճիռալի, Ֆութբոլի մրցումներ որոնց հինգը վերջացած են ի նպաստ մեր վարժարանին, մէկին մէջ արգիւնները եղած են հաւասար, իսկ երկուքը վերջացած են ի նպաստ տար խումբերուն։

15 Մայիս 1966, կէսօրէ ետք տեղի ունեցաւ մեր տարեկան Մարզահանգիւր, ուր մեր տղաք և աղջիկները, բաժնուած Երեւան, Սեւան, Արարատ և Մասիս մարզական խումբերու, կատարեցին վաղքի, աստուծի, ֆութբոլի, պատշէթալի մրցումներ, ի ներկայութեան ձեռնարկեալ խառն բաղմունքեան։

Շարունակեցինք այս տարի ևս, մեր դրպոցէն ներս, աղջկանց բաժնի յատուկ ձեռագործի պահերը, որուն արգիւնքը եղաւ աշխատութիւնով և մաքրութեան ձեռքով ընտիր խումբ մը ձեռագործները։

Այս ձեռագործները առաւմախի գլխաւոր Դիւթը կապեցին մեր դպրոցական տարեկան Պաշարին, որուն մասին կ'անդրադառնանք քիչ անգին։

